

ԱՊՀ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԻՋԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎ

*Ժողովրդավարության զարգացման, պառլամենտարիզմի և
քաղաքացիների ընտրական իրավունքների պաշտպանության
մոնիթորինգի միջազգային ինստիտուտի երևանյան մասնաճյուղ*

**ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԴՐԱՎԱԿԱՆ
ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ**

Կոնֆերանսի նյութերի ժողովածու
28 սեպտեմբերի 2017թ., ք. Երևան

ԵՐԵՎԱՆ
ՀԱՅՐԱՊԵՏ
2017

ՀՏԴ 347.9:06

ԳՄԴ 673404

Դ 250

**Երաշխավորված է տպագրության ԵՊՀ իրավագիտության
ֆակուլտետի խորհրդի կողմից**

Խմբագիր՝

Վահրամ Ավետիսյան

ԱՊՀ ՄԽՎ ԺԶՄՄԻ Երևանյան մասնաճյուղի տնօրեն,
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Դ 250 Դատական իշխանությունը Հայաստանի Հանրապետությունում
սահմանադրաիրավական բարեփոխումների ներքո. կոնֆերանսի
նյութերի ժողովածու.– Եր.: Հայրապետ հրատ., 2017. – 80 էջ:

Ժողովածուն ամփոփում է ԱՊՀ մասնակից պետությունների միջխորհրդարանական վեհաժողովի ժողովրդավարության զարգացման, պառլամենտարիզմի և քաղաքացիների ընտրական իրավունքների պաշտպանության մոնիթորինգի միջազգային ինստիտուտի Երևանյան մասնաճյուղի (այսուհետ՝ Մասնաճյուղ) կողմից 2017թ. սեպտեմբերի 28-ին կազմակերպված՝ «Դատական իշխանությունը Հայաստանի Հանրապետությունում սահմանադրաիրավական բարեփոխումների լուսիները» խորագրով կոնֆերանսի նյութերը:

Մասնաճյուղը Հայաստանի Հանրապետությունում իր գործունեության հինգ տարիների ընթացքում իրականացրել է ժողովրդավարությանը, պառլամենտարիզմին և ընտրական իրավունքների իրականացմանը նվիրված բազմաթիվ ծրագրեր (Մասնաճյուղի կողմից իրականացված աշխատանքներին կարող եք ծանոթանալ www.mimrd.am կայքում):

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատական իշխանության անկախությունը ժողովրդավարական հասարակության անկյունաքարային հիմքերից մեկն է և սահմանադրաիրավական բարեփոխումների համատեքստում, խորհրդարանական կառավարման ձևին անցնելու պայմաններում, դատական իշխանության կազմակերպական, գործառութային անկախության ապահովման խնդիրները ներկայումս գտնվում են ուշադրության կենտրոնում, Մասնաճյուղի կողմից, Արդարադատության ակադեմիայի հետ համատեղ, որոշվեց անցկացնել վերը նշված կոնֆերանսը, որի շրջանակներում Մասնաճյուղի փորձագետների կողմից ներկայացվել են դատական իշխանությանը վերաբերող արդի մի շարք հիմնախնդիրներ:

Սույն ժողովածուն կարող է օգտակար լինել դատավորների, փաստաբանների, պետական հիմնարկների աշխատակիցների, իրավաբանական բուհերի ուսանողների և դասախոսների, ինչպես նաև դատական իշխանության խնդիրներով հետաքրքրվող անձանց համար:

ՀՏԴ 347.9:06

ԳՄԴ 673404

ISBN 978-9939-838-65-6

© ԱՊՀ ՄԽՎ խորհրդի քարտուղարություն, 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արփինե Հովհաննիսյան

**ԱՆԿԱԽ ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ
ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՁԵՎԻ
ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ4**

Գազիկ Ղազինյան

**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԴՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.....25**

Սերժիկ Ավետիսյան

**ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԴԵՊԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԴՐԱՎԱԿԱՆ
ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ45**

Անահիտ Մանասյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄԸ.....62**

**ԱՆԿԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ
ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՁԵՎԻ
ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**

Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական զարգացումների ողջ պատմության ընթացքում, մասնավորապես դրա առանցքը կազմող սահմանադրական բարեփոխումների երկու հիմնական փուլերում (1995-2005թթ. և 2005-2015թթ.) մշտապես ուշադրության կենտրոնում են եղել դատական իշխանության կազմակերպման և գործունեության հետ կապված այնպիսի հիմնաքարային խնդիրներ, ինչպիսիք են դատական իշխանության անկախության և համակարգային ամբողջականության սահմանադրական երաշխիքների, դատական իշխանություն իրականացնող ինստիտուտների միջև գործառութային հստակ փոխհարաբերությունների ապահովումը, իրավական պետության չափորոշիչներին համապատասխան դատական իշխանության հակակշռող դերի էական ամրապնդումը իշխանության այլ ճյուղերի առնչությամբ¹: Ընդ որում, ոչ միայն դատական իշխանության դերի ու նշանակության հստակեցումը, այլ առհասարակ իշխանությունների տարանջատ-

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ՝ մշակված Հայաստանի հանրապետության նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից և Հայաստանի Հանրապետության նախագահի կողմից 2015 թվականի մարտի 14-ին հավանության արժանացած, Երևան, 2014, էջեր 4-5, 10:

ման և հավասարակշռման հիմնարար սկզբունքի հետևողական իրացման պահանջը արդիական է եղել սահմանադրական բարեփոխումների երկու փուլերում էլ: Եվ այն պատճառներն ու նախապայմանները, որոնցով թելադրված է իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի ոչ բավարար հետևողական իրացումը, առավելապես հանգում են հետևյալ գործոններին՝ կառավարման ձևը, հասարակական ինքնագիտակցության ցածր մակարդակը և կուսակցական համակարգի կայացման դեռևս չլուծված հիմնախնդիրները¹: Դեռ ավելին, սահմանադրական բարեփոխումների երկրորդ փուլում իբրև սահմանադրական լուծում պահանջող խնդիր՝ առանձնացվեց պառլամենտարիզմի ներկա պահանջներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի դերի՝ անհրաժեշտ մակարդակի բարձրացումը արդյունավետ օրենսդրական գործունեության, վերահսկողական առաքելության, ինչպես նաև պետական իշխանության և կառավարման մարմինների ձևավորման գործում²: Ուստի պատահական չէր, որ իշխանությունների իրական բաժանման և հավասարակշռման մոդելի մշակման աշխատանքների արդյունքը և խնդրի հնարավոր լուծումը սահմանադրական բարեփոխումների համատեքստում եղավ անցումը կիսանախագահական կառավարման ձևից խորհրդարանական կառավարման ձևին:

Խորհրդարանական կառավարման ձևի ներդրումը բնականաբար իրավական հիմքեր ստեղծեց իշխանությունների տարանջատման համակարգում ոչ միայն օրենսդիր և գործադիր, այլ նաև օրենսդիր և դատական իշխանության փոխգործակցության փոփոխ-

¹ Տե՛ս Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի դրույթները և դրանց իրացման հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում (գիտագործնական հետազոտություն)/Գ.Բ. Դանիելյան, Վ.Ա. Այվազյան, Ա.Ա. Մանասյան.– Եր.: Հայրապետ հրատ., 2015, էջ 143/<http://ysu.am/files/Book-Konst.pdf>:

² Տե՛ս վերը հիշատակված Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ, էջ 9:

ման՝ մասնավորապես, դատական իշխանության կազմակերպման հարցում օրենսդիր իշխանության մարմնի դերակատարման որոշակի ակտիվացման համար: Իշխանությունների տարանջատման, այսպես կոչված, նոր սահմանադրական մոդելի շրջանակներում դատական իշխանության կազմակերպման և գործունեության իրավական հիմքերն ամրագրվել են իշխանության այս թևի առանձնահատուկ դերակատարման հաշվառմամբ: Որոշակիորեն ճանաչված իրողություն է այն, որ զսպումների և հակակշիռների համակարգում դատական իշխանության համար բնութագրական է ոչ միայն արդարադատության գործառույթը, այլև օրենսդիր և գործադիր իշխանության մարմինների որոշումների վրա ներազդելու, վերջիններիս հավասարակշռելու իրավական հնարավորությունը¹: Դատական իշխանությունն է կրում ժողովրդավարական հասարակության կայացման և կառավարման ավտորիտար համակարգի կանխման բեռն այն պարագայում, երբ օրենսդիր իշխանությունը ձեռնամուխ լինի հակասահմանադրական օրենքների ընդունմանը, իսկ գործադիր իշխանությունը դրանց գործադրմանը²:

Դատական իշխանության կազմակերպման հիմնաքարային խնդիրների կարգավորման իրավական հիմքերն սահմանադրական վերջին բարեփոխումների համատեքստում իրենց ամրագրումն են ստացել այն գաղափարից ելնելով, որ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սահմանադրական համակարգում դատական իշխանությունը գլխավորապես ունի հավասարակշռող կամ կայունացնող դեր և որ նման առաքելության իրացման առաջնային նախադրյալը ոչ իրավաչափ ցանկացած ներգոր-

¹ Ст'ю Савицкий, В.М. Организация судебной власти в Российской Федерации: учеб. пособие для вузов / В.М. Савицкий; Рос. акад. наук, Ин-т гос. и права, Акад. правовой ун-т. - М.: Бек, 1996, էջ 29:

² Ст'ю Баглай М. В. Конституционное право Российской Федерации: Учебник для вузов. - 3-е изд., изм. и доп.-М.: Издательство НОРМА (Издательская группа НОРМА-ИНФРА•М), 2002, էջ 361/ http://www.webnomos.ru/images/PRAVO/UCHEBNIK/KONSTIT_pr_BAGLAY_uheb.pdf:

ծությունից կամ միջամտությունից դատական իշխանության պաշտպանվածությունն է. միայն գործառության, կառուցակարգային, նյութական ու սոցիալական անհրաժեշտ ու բավարար անկախությամբ օժտված դատական իշխանությունը կարող է երկրում իրավունքի գերակայության, արդյունավետ արդարադատության և արդար դատաքննության երաշխավոր լինել¹:

Անկախ, ինքնուրույն և հաշվետու դատական իշխանության կայացման կարգախոսին համահունչ՝ սահմանադրական կարգավորում ստացած առաջնահերթ հայեցակարգային խնդիրները հանգում են հետևյալին.

1. Բարձրագույն դատական խորհրդի (ներկայիս Արդարադատության խորհրդի իրավահաջորդի)՝ որպես դատական իշխանության անկախության երաշխավորի կարգավիճակի, կազմակերպման և գործունեության իրավական հիմքերի հստակեցումը.

1.1 Բարձրագույն դատական խորհրդի կարգավիճակը.

Դատական իշխանության անկախությունը սոսկ հռչակագրային դրույթ չէ և դրա կյանքում կենսագործումը պահանջում է համապատասխան երաշխիքների առկայություն: Այդ երաշխիքների շարքում թերևս առավել առանձնահատուկը անկախ պետական մարմնի կարգավիճակով դատական իշխանության անկախության երաշխավորի գոյությունն է, ինչպիսին գործող օրենսդրական կարգավորման պայմաններում ՀՀ արդարադատության խորհուրդն է, իսկ 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով սահմանադրական կարգավորումների համատեքստում վերջինիս իրավահաջորդը՝ Բարձրագույն դատական խորհուրդը:

Առհասարակ եվրոպական երկրների փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ճանաչված պրակտիկ իրողություն է

¹ Տե՛ս վերը հիշատակված Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի դրույթները և դրանց իրացման հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում, էջեր 159-160:

դրանց մեծ մասի իրավական համակարգերում քաղաքականապես չեզոք դատական խորհուրդներ կամ դրանց համարժեք մարմինների գոյությունը՝ որպես ժողովրդավարական սկզբունքների նկատմամբ հսկողություն իրականացնող պահակի դեր ծառայող գործիք (watchdog): Ուշագրավ է այն, որ ժողովրդավարություն իրավունքի միջոցով եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով), տարբեր իրավական համակարգերի բազմազանության հաշվառմամբ, առաջարկում է, որ բոլոր պետությունները, որոնք դեռևս չունեն նման խորհուրդներ, ստեղծեն այդպիսիք¹:

Չնայած դատական իշխանության անկախության պաշտպանությունը ընդհանուր նպատակ է դատական խորհուրդների ճնշող մեծամասնության համար, սակայն տարբեր խորհուրդներ այդ խնդիրը տարբեր կերպ են լուծում: Շատ երկրներում խորհուրդների ստեղծման գերխնդիրը գործադիր, օրենսդիր, քաղաքական իշխանության գերակայությունից է դատական իշխանությանն ապահովագրելն է: Որոշ այլ երկրներում խորհուրդները դատական իշխանության ներքին անկախության ապահովման խնդիր են լուծում: Շատ երկրներում մտահոգության առարկա այն ժամանակային ռեսուրսներն են, որոնք դատավորները ծախսում են կազմակերպչական (ադմինիստրատիվ) հարցերի վրա, և այդ պատճառով դատարանների գործունեության արդյունավետության բարձրացման համար կառավարչական գործառույթները փոխանցվում են խորհուրդներին²:

¹ St' u Compilation of Venice Commission Opinions and Reports Concerning Courts and Judges, CDL-PI(2015)001 2015, Strasbourg, France

² St' u Comparative analysis on the High Councils for Judiciary in the EU member states and judicial immunity (http://www.justicereformukraine.eu/wp-content/uploads/2014/09/Report_Councils_eng.pdf), Global Best Practices: Judicial Councils, Lessons Learned From Europe and Latin America, Violaine Autheman, Sandra Elena, IFES Rule of Law White Paper Series 2004 (<http://www.ifes.org/publications/global-best-practices-judicial-councils-lessons-learned-europe-and-latin-america>)

Ընդհանուր առմամբ դատական խորհրդի կարգավիճակի, հիմնական դերակատարման և լիազորությունների շրջանակի առումով հարավ-եվրոպական և հյուսիս-եվրոպական մոդելները: Առաջին մոդելի շրջանակներում դատական խորհուրդների հիմնական դերակատարումը հանգում է դատական իշխանության անկախության պաշտպանությանն ու ամրապնդմանը, իսկ լիազորություններն առավելապես կապված են դատավորների նշանակման, առաջխաղացման, դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հետ: Ընդ որում, այս մոդելի շրջանակներում միավորված երկրների համար բնութագրական է դատական խորհուրդների կազմակերպման և գործունեության սահմանադրական հիմքերի գոյությունը:

Հյուսիս-եվրոպական մոդելի շրջանակներում դատական խորհուրդների հիմնական գործառնություններն են դատական համակարգի արդյունավետ կառավարմանը նպաստելը, այդ թվում՝ բյուջեի պլանավորումը, վարչակազմի կառավարումը, դատարանների նյութատեխնիկական ապահովումը, կադրային քաղաքականությունը¹: Սակայն հարկ է նշել, որ դատական խորհուրդներին կառավարչական գործառնություններ վերապահելու հիմնավորումը դարձյալ դատական իշխանության անկախության ամրապնդումն է և դատական իշխանության ներքին գործերին արտաքին միջամտության բացառումը:

Վենետիկի հանձնաժողովի դիրքորոշումները դատական խորհուրդների դերակատարման վերաբերյալ այն է, որ դատական

¹ St 'u Comparative analysis on the High Councils for Judiciary in the EU member states and judicial immunity (http://www.justicereformukraine.eu/wp-content/uploads/2014/09/Report_Councils_eng.pdf), Global Best Practices: Judicial Councils, Lessons Learned From Europe and Latin America, Violaine Autheman, Sandra Elena, IFES Rule of Law White Paper Series 2004 (<http://www.ifes.org/publications/global-best-practices-judicial-councils-lessons-learned-europe-and-latin-america>)

խորհուրդների դերը կարող է տարբեր երկրներում տարբեր լինել, սակայն վերջիններս պետք է ունենան նշանակալից դերակատարում դատավորների նշանակման և առաջխաղացման գործում, նրանց նկատմամբ կարգապահական միջոցների կիրառման հարցում¹:

2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով սահմանադրության 164-րդ հոդվածի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհուրդն անկախ պետական մարմին է, որը երաշխավորում է դատարանների և դատավորների անկախությունը: Սահմանադրական այս նորմը երկրի հիմնական օրենքի մակարդակով հստակ ամրագրում է, որ Բարձրագույն դատական խորհրդի սահմանադրական առաքելությունը դատական իշխանության անկախության երաշխավորումն է:

ՀՀ Բարձրագույն դատական խորհրդի լիազորությունների նոր սահմանադրական կարգավորումից բխում է, որ վերջինիս վերապահվել են դատավորների ընտրության, վերջիններիս լիազորությունների դադարեցման, դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցերը, որոնք ուղղակիորեն կապված են դատական իշխանության անկախության երաշխավորման հետ (2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով սահմանադրության 175-րդ հոդված): Բացի այդ, 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով սահմանադրության 175-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհուրդն է հաստատում է իր, ինչպես նաև դատարանների ծախսերի նախահաշիվները և ներկայացնում Կառավարություն՝ օրենքով սահմանված կարգով պետական բյուջեի նախագծում ընդգրկելու համար: Հաշվի առնելով, որ դատական իշխանության անկախությունը սերտորեն կապված է պատշաճ ֆի-

¹ St 'u Compilation of Venice Commission Opinions and Reports Concerning Courts and Judges, CDL-PI(2015)001 2015, Strasbourg, France.

նանսավորման հետ՝ միանգամայն իրավաչափ է այս լիազորությունը Բարձրագույն դատական խորհրդին վերապահելը: Վենետիկի հանձնաժողովի դիրքորոշումը ևս այս հարցում այն է, որ բարձրագույն դատական խորհուրդը կարող է լինել դատական իշխանության ներկայացուցիչը բյուջետային գործընթացում բյուջեի նախագիծ կազմելով և իրավասու մարմինն առաջարկ ներկայացնելով¹:

1.2 Բարձրագույն դատական խորհրդի կազմը.

Դատական իշխանության անկախության վերաբերյալ հիմնարար մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում հատուկ անդրադարձ կա դատական խորհուրդների կազմի և կազմավորման կարգի հետ կապված հարցերին:

Դատական համակարգի անկախության սկզբունքների Պեկինյան փաստաթղթի 15-րդ հոդվածում՝ համաձայն որի՝ հանձնաժողովը (դատական խորհուրդը) պետք է ընդգրկի դատական իշխանության ներկայացուցիչներ և իրավաբանի մասնագիտություն ունեցող անկախ ներկայացուցիչներ, ինչը կապահովի դատական համակարգի ձեռնահասությունը և անկախությունը²:

Վենետիկի հանձնաժողովի դիրքորոշման համաձայն՝ խորհրդի անդամների զգալի մասը պետք է ընտրվի դատական համակարգի կողմից: Խորհրդի դեմոկրատական լեգիտիմությունը ապահովելու համար՝ խորհրդի ոչ դատավոր անդամները պետք է ընտրվեն խորհրդարանի կողմից իրավունքի պրոֆեսորների և հատկապես այն իրավաբանների կազմից, ովքեր որպես արդարադատության «հաճախորդներ» ունեն ուղղակի շահ արդարա-

¹ St' u Compilation of Venice Commission Opinions and Reports Concerning Courts and Judges, CDL-PI(2015)001 2015, Strasbourg, France.

² St' u https://www.hurights.or.jp/archives/other_documents/section1/1995/08/beijing-statement-of-principles-of-the-independence-of-the-judiciary-in-the-lawasia-region-beijing-1.html

դատության պատշաճ իրականացման համար¹ հաշվի առնելով շահերի բախումը: Վենետիկի հանձնաժողովն ընդգծել է այն սկզբունքի երաշխավորման անհրաժեշտությունը, որ ոչ միայն դատավորները, այլ նաև դատական իշխանության շահառուները, ինչպիսիք են փաստաբանները, քաղաքացիական հասարակության և ակադեմիական շրջանակների ներկայացուցիչները ընդգրկված լինեն խորհրդի կազմում, քանի որ միատարրությունը կարող է հանգեցնել ինքնաքննադատության, հանրային հաշվետվողականության և արտաքին կարիքների և պահանջների ընկալման նվազեցմանը: Վենետիկի հանձնաժողովի գնահատմամբ դատական խորհրդի կազմի միատարրության հնարավոր վտանգ կարող է լինել կորպորատիվզմը, որից կարելի է խուսափել՝ ապահովելով, որ խորհրդի՝ դատական իշխանությունը ներկայացնող անդամները չունենան վճռորոշ ազդեցություն խորհրդի նկատմամբ: Նրանց ներկայացվածությունը պետք է հակակշռվի քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներով (իրավաբաններ, իրավունքի պրոֆեսորներ, իրավաբան-գիտնականներ իրավունքի տարբեր ճյուղերից): Ընդ որում նախընտրելի է, որ ոչ դատավոր անդամները նշանակվեն ոչ թե գործադիր, այլ օրենսդիր մարմնի կողմից²:

Վենետիկի հանձնաժողովի կարծիքով դատավոր և ոչ դատավոր անդամների հավասար ներկայացվածությամբ կազմը թույլ կտա ապահովել հասարակության լայն ընդգրկվածությունը և հնարավորություն կտա խուսափել քաղաքականացված և ավտոկրատ կառավարումից:

Վենետիկի հանձնաժողովն այն դիրքորոշման կողմնակիցն է, որ դատական խորհրդի կազմի տեսանկյունից ժողովրդի կամքը

¹Տե՛ս [http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-JD\(2007\)001-e](http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-JD(2007)001-e)

²Տե՛ս Compilation of Venice Commission Opinions and Reports Concerning Courts and Judges, CDL-PI(2015)001 2015, Strasbourg, France.

պետք է ներկայացվի պառլամենտի միջոցով՝ լեգիտիմ համարելով պառլամենտին խորհրդի անդամների նշանակման հարցում նման կարևոր դերակատարում տալը: Իհարկե վերջին դեպքում պայմանն այն է, որ ոչ դատավոր անդամները խորհրդարանի կողմից պետք է ընտրվեն որակյալ մեծամասնությամբ, քանի որ դա ապաքաղաքականացվածության երաշխիք կարող է ծառայել: Միևնույն ժամանակ չափից դուրս բարձր շեմի նախատեսումը կարող է հանգեցնել նրան, որ ընդամենը մի քանի քաղաքական գործիչ կարողանան փակուղի մտցնել ընտրական գործընթացը:

Պաշտպանելով այն տեսակետը, որ ավելի նպատակահարմար է, որ խորհրդի անդամները ընտրվեն Ազգային ժողովի, քան թե երկրի նախագահի կողմից, միևնույն ժամանակ խորհրդի անդամներին առաջադրելիս քաղաքական ենթատեքստերից խուսափելու համար Վենետիկի հանձնաժողովն առաջարկում է տալ այնպիսի կարգավորումներ, որ Ազգային ժողովը չունենա թեկնածուների ընտրության հնարավորություն, և մեկ տեղի համար պետք է առաջադրվի մեկ թեկնածու: Այս պարագայում Ազգային ժողովը ստանում է սոսկ վետոյի իրավունք:

Վենետիկի հանձնաժողովը կարևորել է նաև այն, որ ընդդիմությունը ևս պետք է հնարավորություն ունենա ազդել խորհրդի ձևավորմանը:

Այսպես, օրինակ, Եվրոպայի դատավորների խորհրդատվական խորհրդի թիվ 10 եզրակացության համաձայն. *«21. Խորհրդի թե դատավոր, թե ոչ դատավոր անդամները պետք է ընտրվեն իրենց ձեռնահասության, փորձի, դատական կյանքն ընկալելու, բանավեճերին մասնակցելու կարողության և անկախության մշակութային հիման վրա:*

22. *Ոչ դատավոր անդամները կարող են ընտրվել այնպիսի հեղինակավոր իրավագետների, համալսարանական պրոֆեսոր-*

ների կազմից, որոնք ունեն մասնագիտական գործունեության որոշակի ստաժ (...):

Դատական կառավարման ժամանակակից մոդելը կարող է պահանջել նաև ավելի լայն, այդ թվում՝ ոչ իրավական ոլորտում մասնագիտացած անձանց ներկայացվածություն՝ օրինակ՝ ֆինանսներ, տեղեկատվական տեխնոլոգիաներ, սոցիալական գիտություններ և այլն:

23. Խորհրդի ենթադրյալ անդամները չպետք է լինեն ակտիվ քաղաքական գործիչներ, խորհրդարանի, գործադիր իշխանության ներկայացուցիչներ:

(...)

32. Ոչ դատավոր անդամները չպետք է նշանակվեն գործադիրի կողմից: Չնայած յուրաքանչյուր պետություն ինքը պետք է ապահովի շահերի հավասարակշռումը, սակայն խորհրդատվական խորհուրդն առաջարկում է այնպիսի համակարգ, որ ոչ դատավոր անդամները չընտրվեն քաղաքական իշխանությունների կողմից: Ամեն դեպքում, եթե ոչ դատավոր անդամները ընտրվում են խորհրդարանի կողմից, ապա նրանք պետք է ընտրվեն որակյալ մեծամասնությամբ՝ ստանալով ընդդիմության նշանակալից աջակցությունը և ընտրվեն այնպես, որ խորհրդում ապահովի հասարակության բազմաշերտ ներկայացվածությունը:

Ըստ էության այս նույն մոտեցումն է ամրագրված նաև «Դատական վարչարարություն, ընտրություն և հաշվետվողականություն» Արևելյան Եվրոպայում, Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում դատական անկախության վերաբերյալ Կիևյան հանձնարարականներում:

Տարբեր երկրների փորձի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ գոյություն ունեն խորհուրդների կազմավորման տարբեր մոդելներ, դատական խորհուրդներին անդամակցությունը տարբերվում է երկրից երկիր և մեծապես կախված է դրանց ստեղծման քաղաքական դրդապատճառներից: **Պետք է նշել, որ**

ամենահաջողված մոդելներն են համարվում այն մոդելները, որոնցում ներկայացված են պետական և քաղաքացիական հասարակության գործիչները¹: ԵՄ անդամ երկրների դատական խորհուրդների կառուցվածքի վերլուծությունը ցույց է տվել, որ խորհուրդների ոչ դատավոր անդամները հիմնականում ներկայացնում են իրավունքի ոլորտի այլ մասնագիտություններ՝ փաստաբաններ (Բելգիա, Բուլղարիա, Դանիա, Ֆրանսիա, Մալթա, Իռլանդիա, Սլովենիա, Իսպանիա, Շվեդիա) դատախազներ (Բուլղարիա, Ֆրանսիա, Ռումինիա, Իսպանիա, Իտալիա, Լատվիա, Մալթա, Էստոնիա), նոտարներ (Լատվիա), հարկադիր կատարողներ (Լատվիա), համալսարանական պրոֆեսորներ (Բելգիա, Բուլղարիա, Խորվաթիա, Սլովենիա, Իսպանիա): Կան դեպքեր, երբ խորհրդի կազմում ընդգրկվում են այլ մասնագիտություններ ներկայացնող անձինք, օրինակ՝ Շվեդիայում խորհրդում ընդգրկված են արհմիությունների երկու ներկայացուցիչ²: Ընդ որում, այդ նույն փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ օրենսդիր մարմնի կողմից խորհրդի ոչ դատավոր անդամների ընտրությունը որոշակիորեն տարածված կարգավորում է: Այսպես, օրինակ, Բելգիայում Բարձրագույն դատական խորհուրդը կազմված է 44 անդամից³, 22 անդամը ներկայացնում են դատական իշխանությունը: Մնացած 22 անդամն ընտրվում են Սենատի կողմից հետևյալ համամասնությամբ.

1. առնվազն 4 անդամ, որոնք ներկայացնում են փաստաբանական համայնքը և ունեն առնվազն 10 տարվա աշխատանքային ստաժ.

¹Տե՛ս <https://www.encj.eu/images/stories/pdf/judiciaries/authemaandelena2004judicialcouncilslessonslearnedeuropelatinamerica.pdf>

²Տե՛ս Comparative analysis on the High Councils for Judiciary in the EU member states and judicial immunity

³Տե՛ս https://www.encj.eu/images/stories/pdf/factsheets/hrj_cs_j_belgium.pdf

2. 3 համալսարանական պրոֆեսորներ, որոնք ունեն առնվազն 10 տարվա մասնագիտական ստաժ.

3. 4 անդամներ, որոնք ունեն համալսարանական կամ այլ համարժեք աստիճան և առնվազն 10 տարվա մասնագիտական ստաժ:

Բուլղարիայի Սահմանադրության 130-րդ հոդվածը սահմանում է, որ դատական խորհրդի ոչ դատավոր անդամներ կարող են ընտրվել բարձր մասնագիտական և բարոյական հատկանիշներ ունեցող այն իրավաբանները, ովքեր ունեն մասնագիտական գործունեության 15-ամյա ստաժ: Մանրամասն կարգավորումներ սահմանված են «Դատական համակարգի մասին» Բուլղարիայի օրենքով, որի 17-րդ հոդվածը սահմանում է, որ Ազգային ժողովը ընտրում է խորհրդի 11 անդամներին դատավորների, դատախազների, քննիչների, համալսարանական պրոֆեսորների, փաստաբանների և այլ իրավաբանների կազմից: Միևնույն ժամանակ խորհրդի մյուս 11 անդամներին ընտրում են դատական իշխանության մարմինները դատավորների, դատախազների և քննիչների կազմից: Ազգային ժողովում խորհրդի անդամի թեկնածությունը կարող է առաջարկվել պատգամավորների կողմից: Առաջադրման հետ մեկտեղ պետք է ներկայացվեն փաստաթղթեր թեկնածուի մասնագիտական որակների, մասնագիտական գործունեության ստաժի, պահանջվող գիտական աստիճանի վերաբերյալ: Խորհրդարանական լսումներից ոչ ուշ, քան 7 օր առաջ հասարակական համապատասխան կազմակերպությունները, բարձրագույն ուսումնական և գիտական հաստատությունները պետք է ներկայացնեն թեկնածուի վերաբերյալ իրենց կարծիքները, որոնք հրապարակվում են Ազգային ժողովի պաշտոնական կայքում¹: Կամ, օրինակ, Ֆրանսիայում Սահմանադրության 65-րդ հոդվածի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհուրդը կազմված է երկու բաժնից,

¹Տե՛ս <http://www.legislationline.org/topics/country/39/topic/9>

որոնցից մեկի իրավասությունը տարածվում է դատավորների, մյուսը՝ դատախազների վրա: Դատական իշխանության համար պատասխանատու բաժինը կազմված է երկրի նախագահից, արդարադատության նախարարից, հինգ դատավորներից, մեկ դատախազից, Պետական խորհրդի մեկ ներկայացուցչից և երեք հեղինակավոր քաղաքացիներից, որոնք դատավոր նշանակվում են երկրի նախագահի, Ազգային ժողովի և Սենատի կողմից¹:

2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխություններով սահմանադրության 94.1-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ արդարադատության խորհուրդը բաղկացած է 9 դատավոր անդամներից և 4 իրավաբան-գիտնականներից: Դատավոր անդամների թվային ակնհայտ գերակշռության և պարակտիկ իրողության այն պայմաններում, երբ գործնականում իրավաբան-գիտնականների անդամությունը չի կարող լուրջ հակակշիռ ծառայել առավել քան ակնհայտ է վերը հիշատակված միջազգային իրավական դիրքորոշումների, մասնավորապես Վենետիկի հանձնաժողովի եզրակացությունների համատեքստում կորպորատիվիզմի և բացառապես սեփական ներքին շահերով առաջնորդվելու վտանգը: Այս խնդիրը թերևս լուծվել է սահմանադրական նոր կարգավորումներով, որոնց սահմանվել է դատավոր և ոչ դատավոր անդամների հավասար թվային ներկայացվածություն (5 դատավոր և 5 ոչ դատավոր անդամ): Ինչ վերաբերում է Բարձրագույն դատական խորհրդի կազմավորման կարգին, ապա այդ նույն կարգավորումների համաձայն՝ դատավորներ անդամներին ընտրում է **Դատավորների ընդհանուր ժողովը**, իսկ ոչ դատավոր անդամներին՝ **Ազգային ժողովը**՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, ընտրական իրավունք ունեցող, բարձր մասնագիտա-

¹St' u Comparative analysis on the High Councils for Judiciary in the EU member states and judicial immunity

կան որակներով և մասնագիտական աշխատանքի առնվազն տասնհինգ տարվա փորձառությամբ իրավաբան գիտնականների և այլ հեղինակավոր իրավաբանների թվից:

Բարձրագույն դատական խորհրդի ներքին անկախության երաշխավորման տեսանկյունից չափազանց կարևոր է սահմանադրական այն կարգավորումը, որ Բարձրագույն դատական խորհուրդն իր կազմից Դատական օրենսգրքով սահմանված ժամկետով և կարգով ընտրում է խորհրդի նախագահ՝ հաջորդաբար դատավորների ընդհանուր ժողովի և Ազգային ժողովի կողմից ընտրված անդամներից: Մինչդեռ գործող օրենսդրական կարգավորման պայմաններում Արդարադատության խորհրդի նիստերը հրավիրում և վարում է ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահը, ինչը խնդրահարույց է այս մարմնի ներքին անկախության տեսանկյունից:

Վերոգրյալի համատեքստում կարող ենք փաստել, որ Բարձրագույն դատական խորհրդի կազմի, կազմավորման կարգի առումով սահմանադրական հիմքեր են ստեղծվել այս կառույցի ներքին և արտաքին անկախության իրավական տեսանկյունից երաշխավորման համար: Այս նոր կարգավորումները լուծում են առկա խնդիրները և առավելապես համահունչ են միջազգային իրավական չափանիշներին:

2. Դատավորների ընտրության (նշանակման) կարգը

Առհասարակ դատավորների ընտրության (նշանակման) կարգի հետ կապված՝ կան միջազգային իրավական փաստաթղթերում ամրագրված որոշակի իրավական չափանիշներ: Այսպես, օրինակ, միջազգային իրավական փաստաթղթերում, իբրև ընդհանուր բնույթի պահանջ, առաջ է քաշվում այն գաղափարը, որ դատավորների նշանակման (ընտրության), ծառայողական առաջախաղացման գործընթացը պետք է կազմակերպվի օբյեկտիվ չափանիշների հիման վրա՝ հաշվի առնելով նաև անձի արժանիքները:

րը, մասնագիտական կարողությունները¹ բացառելով քաղաքական նկատառումները²: Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ R (94) 12 հանձնարարականի 1.2 c սկզբունքի համաձայն՝ դատավորների ընտրության և առաջխաղացման համար պատասխանատու մարմինը պետք է անկախ լինի կառավարությունից և գործադիր իշխանությունից: Ընդ որում, նշված մարմնի անկախությունն ապահովելու համար, օրինակ, համապատասխան կանոններ պետք է սահմանվեն առ այն, որ այդ մարմնի անդամներն ընտրվում են դատական իշխանության կողմից, իսկ այդ մարմինն էլ համապատասխան որոշումներն ընդունում է ընթացակարգային կանոնների պահպանմամբ:

Առհասարակ միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գոյություն ունեն դատավորների (ընտրության) նշանակման 4 հիմնական մոդելներ՝

1. դատավորների նշանակումը քաղաքական մարմինների կողմից.
2. դատավորների նշանակումը դատական իշխանության կողմից.
3. դատավորների նշանակումը դատական խորհրդի կողմից.

¹ Տե՛ս ՄԱԿ-ի դատական իշխանության հիմնական սկզբունքները, 13-րդ կետ (40/146 ընդունված Գլխավոր ասամբլեայի կողմից 1985 թվականի դեկտեմբերի 16-ին)/ <http://www.ohchr.org/EN/ProfessionalInterest/Pages/IndependenceJudiciary.aspx>: Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ R (94) 12 հանձնարարականի 1.2 c սկզբունք <https://advokat-prnjavorac.com/legislation/Recommendation.pdf>:

² Տե՛ս Ժողովրդավարություն իրավունքի միջոցով Եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) թիվ 403/2006 (CDL-AD(2007)028) եզրակացությունը, 6-րդ պարբերություն, 22 հունիսի 2007, [http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2007\)028-e](http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2007)028-e): Եվրոպայի դատավորների խորհրդատվական խորհրդի թիվ 1 եզրակացությունը, 17-րդ կետ, 23 նոյեմբերի 2001., Ստրասբուրգ: <https://wcd.coe.int/ViewDoc.jsp?p=&id=1047753&direct=true>:

4. դատավորների նշանակումը ընտրությունների միջոցով:¹

Ընդ որում, վերը հիշատակված երրորդ մոդելի շրջանակում դատավորները նշանակվում են կամ անձամբ դատական խորհրդի կողմից կամ վերջինիս ներկայացմամբ քաղաքական մարմինների կողմից: Նոր սահմանադրական կարգավորումներից բխում է, որ մեր ներպետական իրավական համակարգում գործելու է երրորդ մոդելի երկրորդ տարատեսակը: Այսպես, 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով սահմանադրության 166-րդ հոդվածի 3-րդ մասի այն կարգավորմանը, որ Վճռաբեկ դատարանի դատավորներին նշանակում է Հանրապետության նախագահը՝ Ազգային ժողովի առաջարկությամբ, և որ Ազգային ժողովն առաջարկվող թեկնածուին ընտրում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով՝ դատավորի յուրաքանչյուր տեղի համար Բարձրագույն դատական խորհրդի ներկայացրած երեք թեկնածուների թվից: Կամ նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Վճռաբեկ դատարանի նախագահին ընտրում է Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ՝ Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությամբ, Վճռաբեկ դատարանի կազմից, վեց տարի ժամկետով:

Այս առնչությամբ պետք է նշել, որ Նախագահի կողմից դատավորներին նշանակելու կառուցակարգը Վենետիկի հանձնաժողովի գնահատմամբ իրավաչափ է՝ պայմանով, որ անկախ դատական խորհրդի առաջարկը պարտադիր է հանրապետության նախագահի համար²: Ինչ վերաբերում է պառլամենտի կողմից դատավորների նշանակման կառուցակարգին՝ Վենետիկի հանձնաժողովն այն տեսակետն է արտահայտել, որ այն թեև առավել ժո-

¹ Տե՛ս <https://www.usip.org/sites/default/files/Judicial-Appointments-EN.pdf>

² Տե՛ս Վենետիկի հանձնաժողովի թիվ 403/2006 (CDL-AD(2007)028) եզրակացությունը, 14-րդ կետ:

դովրդավարական մեխանիզմ է թվում, բայց կարող է նաև դատավորներին ներգրավել քաղաքական գործունեության մեջ և հանգեցնել գործընթացի քաղաքականացմանը¹:

Այս կապակցությամբ հարկ են համարում նշել, որ տարածված միջազգային փորձ է օրենսդիր մարմնի կողմից դատավորների նշանակումը: Այսպես, օրինակ, Մոլդովայում բարձրագույն դատական ատյանի նախագահը, փոխնախագահները և դատավորներն ընտրվում են օրենսդիր մարմնի կողմից Մագիստրոսների խորհրդի ներկայացմամբ (Սահմանադրության 116-րդ հոդված), Վրաստանում դարձյալ բարձրագույն դատական ատյանի դատավորները նշանակվում են օրենսդիր մարմնի կողմից դեռ ավելին երկրի նախագահի ներկայացմամբ (Սահմանադրության 90-րդ հոդված): Լատվիայում, Լիտվայում, Սերբիայում, Սլովենիայում դատավորները նշանակվում են օրենսդիր մարմնի կողմից: Օրենսդիր մարմնի կողմից դատավորների նշանակման մեխանիզմը տարածված է նաև Անգլիայում և ԱՄՆ-ում:

Բացի այդ, գործընթացի հնարավոր քաղաքականացման մտավախության հետ կապված՝ իբրև կարևոր երաշխիք՝ պետք է ընդգծել օրենսդրական այն կարգավորումը, որ Վճռաբեկ դատարանի դատավորներն ընտրվում են ոչ թե որոշակի ժամկետով, այլ մինչև պաշտոնավարման ժամկետի ավարտը, և Ազգային ժողովը դատավորի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման լիազորություն չունի: Բացի այդ, չպետք է մոռանալ, որ խորհրդարանական կառավարման ձևի պայմաններում այս կարգավորումը զսպումների և հակակշիռների համատեքստում որոշակի հաշվետվողականություն ապահովելու մեխանիզմ է: Այս առումով պետք է նշել, որ թեև առկա որոշակի մտավախություններին՝ առաջարկվող

¹ St' u Compilation of Venice Commission Opinions and Reports Concerning Courts and Judges, CDL-PI(2015)001 2015, Strasbourg, France.

ընթացակարգը հնարավորություն է տալիս երկրի բարձրագույն ատյանի անդամների ընտրության ժամանակ ժողովրդի կամքի արտահայտմանը՝ ժողովրդի կողմից առաջնային մանդատով օժտված ներկայացուցչական մարմնի միջոցով: Բացի դրանից կա մեկ հանգամանք ևս. ընդհանրապես ընդունված է այն մոտեցումը, որ արդարադատությունը ոչ միայն պետք է կատարվի, այլ նաև լինի տեսանելի ու հենց այս հանգամանքն է պահանջում, որ յուրաքանչյուր դատավոր հասարակության մեջ ընկալվի որպես անկախ և անաչառ: Սա հատկապես կարևորվում է երկրի ամենաբարձր ատյանի դատավորների համար, որոնց նկատմամբ հասարակական վստահության ապահովումը պետք է յուրաքանչյուր ժողովրդավարական պետության համար լինի գերխնդիր: Այս առումով շատ կարևորվում է այն ընթացակարգի թափանցիկության ապահովումը, որով բարձրագույն ատյանի դատավորը նշանակվում է: Պետք է նշել, որ ինչքան էլ, որ Բարձրագույն դատական խորհրդում նիստերը անց են կացվում դռնբաց կամ որքան էլ, որ այն կազմված է Ազգային ժողովի կողմից ներկայացված անդամների կողմից, այնուամենայնիվ միայն խորհրդարանական քննարկումներն են, որ ապահովում են հանրության լայն զանգվածների ուշադրությունը քննարկվող հարցի նկատմամբ: Սա նշանակում է, որ խորհրդարանը և հատկապես խորհրդարանական խմբակցությունները կքվեարկեն այն թեկնածուների օգտին, որոնք ունեն ամենամեծ հանրային վստահությունը և բարի համբավը, քանի որ վստահություն չվայելող թեկնածուին ընտրությունը կարող է վնասել սխալ ընտրություն կատարած խմբակցության հեղինակությունը: Բացի դրանից որոշումը կայացվում է ձայների 3\5-ով, ինչը նշանակում է, որ միայն մեկ քաղաքական ուժը բավարար չէ որոշում կայացնելու համար և անհրաժեշտ է բոլոր ուժերի փոխահա-

մաճայնությունը: Ինչը ևս երաշխիք է քաղաքականացվածությունից խուսափելու համար:

Սահմանադրական այս նորմի գործնականում կիրառության փորձի բացակայությունը բացառում է այս կարգավորման իրավաչափ լինելու մասին հստակ եզրահանգումներ անելու հնարավորությունը: Թերևս այս փուլում կարող են առաջնորդվել առավելագույնն այն կանխավարկածով, որ 6-րդ գումարման նորընտիր Ազգային ժողովի կողմից խորհրդարանական կառավարման ձևի պայմաններում՝ իր վրա դրված առաքելությանը համապատասխան գործելու դեպքում, այս նոր մեխանիզմներն իրավամբ կծառայեն անկախ, հաշվետու և արդյունավետ դատական համակարգ ունենալու գերխնդրին, և այս գործընթացը զերծ կմնա նեղ քաղաքական շահերի գերազդեցությունից:

3. Դատարանների նախագահների նոր դերակատարում

Դատարանների ներքին անկախության երաշխավորման տեսանկյունից ամուր իրավական հիմք է սահմանադրական այն նոր կարգավորումը՝ համաձայն որի դատարանների նախագահներն ընտրվում են ռոտացիոն սկզբունքով՝ վճռաբեկ դատարանի և վճռաբեկ դատարանի պալատների նախագահները 6, իսկ մյուս դատարանների նախագահները 3 տարի ժամկետով (2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով սահմանադրության 166-րդ հոդվածի 4-6-րդ մասեր):

Գործող օրենսդրական կարգավորման համաձայն՝ դատարանների նախագահները նշանակվում են որպես դատավոր պաշտոնավարման ողջ ժամկետի համար: Եվ ներկայումս Դատարանների նախագահների խորհրդի գոյության պայմաններում նման կարգավորումը հանգեցրել է գերկենտրոնացման և այն պարզ ճշմարտության անտեսման, որ դատարանի նախագահը ևս դատավոր է, ով պարզապես նաև որոշակի առավելապես, դատարա-

նի բնականոն գործունեության ապահովման հետ կապված կազմակերպակիրական լրացուցիչ լիազորություններ ունի: Այսպես, օրինակ, Կիևյան հանձնարարականների 11-րդ կետի համաձայն՝ «դատարանների դերը պետք է խստորեն սահմանափակված լինի հետևյալ իմաստով. նրանք պետք է ստանձնեն միայն այնպիսի դատական գործառույթներ, որոնք համարժեք են դատարանի այլ անդամների կողմից իրականացվող գործառույթներին: Դատարանի նախագահը չպետք է միջամտի այլ դատավորների կողմից դատական որոշումների կայացմանը և չպետք է մասնակցի դատավորների ընտրությանը: Դատարանի նախագահը չպետք է կարողանա ազդել վարձարության վրա: Նրանք կարող են ունենալ ներկայացուցչական և վարչական, այդ թվում՝ ոչ դատական աշխատողների նկատմամբ հսկողության գործառույթներ»: Այս համատեքստում դատարանների ներքին անկախության երաշխավորման անհարաժեշտությունն ընդգծել են նաև Վենետիկի հանձնաժողովը¹, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն²:

¹ St' u Opinion on the Draft Law on introducing amendments and addenda to the judicial code Strasbourg, 16 June 2014 Opinion no. 768/2014: [http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD\(2014\)021-e](http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2014)021-e)

² St' u Recommendation CM/Rec(2010)12 of the Committee of Ministers https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016805afb78

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկան,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
ՀՀ վաստակավոր իրավաբան,
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

Դատական իշխանության կազմակերպման և գործունեության սկզբունքների շարքում իբրև առավել կարևոր պահանջ, որից մեծապես կախված է նաև դատական իշխանության հիմնարար գործառույթի՝ արդարադատության արդյունավետությունը, անհրաժեշտ է առանձնացնել արդարադատության իրականացնելիս դատարանների (դատավորների) գործունեությանը ցանկացած միջամտության արգելքը:

Դատական իշխանության անկախությունը ժողովրդավարական հասարակության անկյունաքարային հիմքերից մեկն է, քանի որ այն կոչված է ապահովելու օրենքի (իրավունքի) գերակայության սկզբունքի կենսագործումը: Քաղաքացիական հասարակության և իրավական ժողովրդավարական պետության ձևավորման պահանջը կենսական անհրաժեշտություն են դարձնում անկախ և հասարակության համար մատչելի դատական իշխանության ամրապնդումը: Այս իրողության վառ ապացույցն է այն, որ դատաիրավական և մասնավորապես վերջին սահմանադրական բարեփոխումների համատեքստում դատական իշխանության կազմակերպական, գործառույթային անկախության ապահովման խնդիրները մշտապես ուշադրության կենտրոնում են եղել: Խնդրի արդիականության մասին է վկայում նաև միջազգային հարուստ նյութի առկայությունը դատական իշխանության անկախության ամենատարբեր ասպեկտների վերաբերյալ:

2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով սահմանադրության (այսուհետ նաև՝ Սահմանադրություն) 162-րդ հոդվածով սահմանված դատական իշխանության անկախության հիմնարար պահանջն առ այն, որ Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, և որ արդարադատության իրականացմանը որևէ միջամտություն արգելվում է, ենթադրում է գործառնական, կառուցակարգային, նյութական ու սոցիալական անկախության այնպիսի նախադրյալներ, որոնք անհրաժեշտ ու բավարար են դատարանների ու ողջ դատական իշխանության անկախությունը երաշխավորելու համար: Ընդ որում, խոսքը հավասարապես վերաբերում է դատական իշխանության անկախության երաշխավորմանը, թե արտաքին ոչ իրավաչափ ներգործությունից և թե ինքնին դատական իշխանության ներսից եկող հնարավոր ազդեցությունից:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ի թիվս այլոց, որպես դատական իշխանության ներքին և արտաքին անկախության ապահովման ինստիտուցիոնալ երաշխիք բազմաթիվ երկրներում գործում են, այսպես կոչված, դատական խորհուրդներ, որոնց, կազմակերպման և գործունեության առանձնահատկություններով հանդերձ, միավորում է դատական իշխանության անկախության երաշխավորման գերխնդիրը¹:

Մեր իրավական համակարգում այս կարևոր դերակատարումը ներկայումս վերապահված է ՀՀ արդարադատության խորհրդին (այսուհետ նաև՝ Արդարադատության խորհուրդ): Դատական իշխանության անկախության հիմնարար պահանջը և պահանջի իրացման համար պատասխանատու Արդարադատության խորհրդի կազմակերպման և գործունեության հիմքերն ամրագրված էին

¹ St' u The Comparative Law and Economics of Judicial Councils, Berkley Journal of International Law, Volume 27, Issue 1, Article 9, 2009.

դեռևս 1995 թվականի հուլիսի 5-ին ընդունված ՀՀ սահմանադրության, 2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխություններով ՀՀ սահմանադրության մեջ, 2005 թվականի սահմանադրական բարեփոխումների ինկորպորացմանն ուղղված՝ 2007 թվականի փետրվարի 21-ին ընդունված ՀՀ գործող դատական օրենսգրքում: Սակայն Արդարադատության խորհրդի գործունեության ընթացքում ի հայտ եկած բազմաթիվ խնդիրներ ցույց տվեցին, որ այդ կազմակերպարավական հիմքերն անհրաժեշտ և բավարար չեն ինքնին այդ մարմնի անկախության և հատկապես ներքին անկախության երաշխավորման համար: Իսկ եթե բավարար չեն դատական իշխանության անկախության երաշխավորման համար պատասխանատու մարմնի գործունեության անկախության մեխանիզմները, ապա օբյեկտիվորեն անհնար է այդ մարմնի առջև դրված առաքելության իրացումը: Այս մարմինը պետք է անկախ լինի թե օրենսդիր, թե գործադիր և թե անգամ դատական իշխանությունից, քանի որ իրապես անկախ և արդյունավետ գործող արդարադատության խորհուրդն է անկախ, անկողմնակալ և հաշվետու դատական համակարգի գոյության կարևորագույն գրավականը և նախապայմանը: Եվ հենց այս խնդրի իրացման համատեքստում սահմանադրական բարեփոխումների արդյունքում փորձ է արվել նորովի կարգավորել Արդարադատության խորհրդի իրավահաջորդի՝ Բարձրագույն դատական խորհրդի կազմի, կազմավորման կարգի, լիազորությունների իրավական հիմքերը՝ ի սկզբանե կանխորոշելով հետագա օրենսդրական կանոնակարգման շրջանակները:

1. Բարձրագույն դատական խորհրդի սահմանադրական առաքելությունը

2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով սահմանադրության մեջ երկրի հիմնական օրենքի մակարդակով ամրագրված է, որ ***Բարձրագույն դատական խորհուրդն անկախ***

պետական մարմին է, որը երաշխավորում է դատարանների և դատավորների անկախությունը:

Ինչպես արդեն նշել ենք, բազմաթիվ երկրներում գործում են դատական իշխանության անկախության համար պատասխանատու մարմիններ՝ առավելապես դատական խորհուրդների տեսքով: Ու թեև այս մարմինների նպատակը դատական իշխանության անկախության երաշխավորումն է, այդուհանդերձ, պետք է նշել, որ այդ նպատակից բխող խնդիրները, դրանց իրացման ուղիները և դրանցով պայմանավորված՝ այդ մարմինների լիազորությունների շրջանակը տարբեր է:

Այսպես, օրինակ, Իտալիայում, Ֆրանսիայում, Պորտուգալիայում դատական խորհրդի հիմնական խնդիրը դատական իշխանության առանձնացնումն է գործադիր իշխանությունից: Եվ դատական խորհուրդն օժտված է առավելապես դատավորների ընտրության, առաջխաղացման, կարգապահական պատասխանատվության ենթարկելու ոլորտներում զգալի լիազորություններով՝ էապես սահմանափակելով գործադիր իշխանության մարմինների միջամտությունը (նմանատիպ մոտեցում է դրսևորվել նաև Լատինական Ամերիկայի, Կենտրոնական, Արևելյան Եվրոպայի և նախկին խորհրդային երկրների մեծ մասում): Ընդ որում, նշված երկրներում դատարանների վարչական կառավարման լիազորությունը վերապահված է արդարադատության նախարարին և այնտեղ արդիական չէ վարչական կառավարման գործառույթները խորհուրդներին փոխանցելու պահանջը¹:

¹ St' u The Comparative Law and Economics of Judicial Councils, Berkley Journal of International Law, Volume 27, Issue 1, Article 9, 2009, Comparative analysis on the High Councils for Judiciary in the EU member states and judicial immunity
http://www.justicereformukraine.eu/wpcontent/uploads/2014/09/Report_Councils_eng.pdf

Ի հակառակ սրան Հյուսիսային Եվրոպայի որոշ երկրներում, մասնավորապես, Դանիայում և Շվեդիայում, խորհուրդները մեծապես ստեղծվել են դատարանների վարչական (ադմինիստրատիվ) կառավարման բարելավման, մասնավորապես՝ անձնակազմի և բյուջեի կառավարման համար: Սակայն հարկ է նշել, որ դատական խորհուրդներին այս գործառույթները վերապահելու նպատակը դարձյալ դատական իշխանության անկախության ամրապնդումն է և դատական իշխանության ներքին գործերին արտաքին միջամտության բացառումը¹:

Բարձրագույն դատական խորհրդի լիազորությունները սահմանող՝ Սահմանադրության 175-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությունից բխում է, որ այս մարմնին են վերապահվել դատական իշխանության անկախության երաշխավորման հետ կապված կարևորագույն լիազորություններ, որոնց շրջանակը, ի համեմատություն 2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխություններով սահմանադրության կարգավորումների, ընդլայնվել է, իսկ առանձին լիազորությունների առնչությամբ Բարձրագույն դատական խորհրդի դերակատարումն առավել կարևորվել է: Այսպես, Բարձրագույն դատական խորհրդի լիազորություններն ընդգրկում են **դատավորների թեկնածուների, ներառյալ առաջխաղացման ենթակա թեկնածուների ցուցակների կազմումը և հաստատումը, նշանակման ենթակա դատավորների թեկնածուների առաջադրումը, դատավորների լիազորությունների դադարեցման, դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի լուծումը**: Բարձրագույն դատական խորհրդին են վերապահվել այնպիսի նոր լիազորություններ, ինչպիսիք են **դատավորներին մեկ այլ դատարան գործուղելու հարցը լուծելու, ինչպես նաև իր և դատարանների ծախսերի նախահաշիվները հաստատելու և ՀՀ կառավարություն ներկայացնելու լիազոր-**

¹Տե՛ս նույն տեղում:

րությունները: Այս լիազորությունները դատական իշխանության անկախության համար պատասխանատու անկախ մարմիններին վերապահելը նաև միջազգային իրավական փաստաթղթերի պահանջն է¹:

Վերը հիշատակված լիազորությունների ցանկը, սակայն, սպառնիչ չէ, և Սահմանադրության 175-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհրդի այլ լիազորությունները և գործունեության կարգը սահմանվում են Դատական օրենսգրքով: Սահմանադրական այս նորմը ՀՀ դատական նոր օրենսգրքի նախագծում ինկորպորացնելիս լայն քննարկումների տեղիք տվեց այն հարցը, թե արդյոք Բարձրագույն դատական խորհրդի լիազորությունները պետք է հստակեցվեն՝ ելնելով վերջինիս՝ որպես դատական իշխանության անկախությունը երաշխավորող անկախ պետական մարմնի կարգավիճակից, թե վերջինիս կարող են վերապահվել նաև դատական իշխանության ինքնակառավարման մարմնի համար բնութագրական լիազորություններ: Դեռ ավելին, քննարկվում էր նաև ՀՀ դատական դեպարտամեն-

¹ Տե՛ս՝ *Compilation of Venice Commission Opinions and Reports Concerning Courts and Judges*, CDL-PI(2015)001 2015, Strasbourg, France, <http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDLPI%282015%29001e>

Venice Commission, *The various aspects of external and internal independence of the judiciary*, CDL(2012)035 Strasbourg, 27 April 2012 [http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL\(2012\)035-e](http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL(2012)035-e)
Venice Commission, CDL-INF(1999)005, *Opinion on the reform of the judiciary in Bulgaria* [http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-INF\(1999\)005-e](http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-INF(1999)005-e)

«Դատական ընտրություն, վարչարարություն և հաշվետվողականություն» Արեվելյան Եվրոպայում, Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում դատական անկախության անկախության վերաբերյալ Կիեվյան հանձնարարականներ <http://www.osce.org/hy/odihr/75436?download=true>
Եվրոպայի դատավորների խորհրդատվական խմբի թիվ 10 եզրակացություն http://www.coe.int/t/dghl/cooperation/ccje/textes/Avis_en.asp

տի գործառույթները, այդ թվում՝ դատարանների նյութատեխնիկական ապահովման, կադրային քաղաքականության և այլ ոլորտներում, Բարձրագույն դատական խորհրդին վերապահելու հարցը: Միանշանակ մոտեցումների բացակայությամբ պայմանավորված՝ այս հարցը քննարկման առարկա է դարձվել նաև ՀՀ նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների իրավական ապահովմանն աջակցող մասնագիտական խորհրդակցական խորհրդում: Չխորանալով առկա տարբեր մոտեցումների, ՀՀ Դատական նոր օրենսգրքի նախագծի սկզբնական տարբերակում տեղ գտած և հետագայում փոփոխված ու դեռևս քննարկվող կարգավորումների մեջ՝ պարզապես հարկ ենք համարում նշել, որ մեր խորին համոզմամբ **Բարձրագույն դատական խորհրդին պետք է վերապահել բացառապես վերջինիս՝ որպես դատական իշխանության անկախության երաշխավորի սահմանադրական կարգավիճակից բխող լիազորություններ:** Ինչ վերաբերում է կառավարչակազմակերպական, նյութատեխնիկական ապահովման գործառույթներին, ապա այդպիսիք, իհարկե, կարելի է ի վերջո կապել դատական իշխանության անկախության հետ, սակայն մեր կարծիքով դա դատական իշխանության անկախության չափազանց լայն և անընդունելի մեկնաբանության արդյունք է: Վերջին եզրահանգման օգտին է խոսում նաև միջազգային փորձը: Այսպես, օրինակ, Հյուսիսային Եվրոպայի այն երկրներում, մասնավորապես, Դանիայում, Շվեդիայում, որտեղ խորհուրդները մեծապես ստեղծվել են դատարանների վարչական (ադմինիստրատիվ) կառավարման բարելավման, այդ թվում՝ անձնակազմի և բյուջեի կառավարման համար, չկան սահմանադրական կարգավորումներ դատական խորհուրդների կարգավիճակի, սահմանադրական առաքելության վերաբերյալ: Դեռ ավելին, ինչպես արդեն նշվել է, այդ երկրներում դատական խորհուրդներին կազմակերպական վարչական լիազորություններ վերապահելն այդ գործընթացին

գործադիրի միջամտությունը բացառելու նպատակ ունի, իսկ այդ խնդիրը մեր իրավական համակարգում բացակայում է:

Բացի այդ, Բարձրագույն դատական խորհրդին դատական իշխանության անկախության երաշխավորման նպատակից բխող լիազորություններից բացի նաև այդ նպատակի հետ ուղղակիորեն չկապված լիազորություններով ավելորդ ծանրաբեռնելը կարող է ոչ միայն այս մարմնին շեղել իր հիմնական նպատակից, հնարավորություն չտալով այն արդյունավետ կերպով իրացնել, այլև կարող է բերել հակառակ ծայրահեղ արդյունքի, այն է՝ կարող ենք ունենալ չափազանց լայն լիազորություններով օժտված, իր հակաշիռը չունեցող մի մարմին, որի կողմից իր լիազորությունների պատշաճ իրականացման վերահսկման կամ այդ լիազորությունների սահմանն անցնելու դեպքում բավարար հակազդման մեխանիզմներ չեն լինելու:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում ենք, որ Բարձրագույն դատական խորհրդին պետք է առավելապես վերապահվեն իր՝ որպես անկախության երաշխավորի կարգավիճակից բխող լիազորություններ, որոնք անհրաժեշտ և բավարար կլինեն իր առջև դրված սահմանադրական նպատակն իրացնելու համար:

2. Բարձրագույն դատական խորհրդի կազմը

2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխություններով սահմանադրության 94.1-րդ հոդվածի համաձայն՝ արդարադատության խորհրդի կազմի մեջ մտնում են Հայաստանի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովի կողմից գաղտնի քվեարկությամբ հինգ տարի ժամկետով օրենքով սահմանված կարգով ընտրված ինը դատավորներ, Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի կողմից նշանակված երկուական իրավաբան-գիտնականներ: 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով սահմանադրության 174-րդ հոդվածի կարգավորումների համաձայն՝ Բարձրագույն դատական խորհուրդը կազմված է տասն ան-

դամից: Բարձրագույն դատական խորհրդի հինգ անդամներին ընտրում է դատավորների ընդհանուր ժողովը՝ դատավորի առնվազն տասը տարվա փորձառություն ունեցող դատավորների կազմից: Բարձրագույն դատական խորհրդի մյուս հինգ անդամներին ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ծայների առնվազն երեք հինգերորդով, միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, ընտրական իրավունք ունեցող, բարձր մասնագիտական որակներով և մասնագիտական աշխատանքի առնվազն տասնհինգ տարվա փորձառությամբ իրավաբան գիտնականների և այլ հեղինակավոր իրավաբանների թվից: Ազգային ժողովի կողմից ընտրված անդամը չի կարող լինել դատավոր:

Դատական խորհուրդների կազմի խնդրին անդրադարձել են նաև միջազգային իրավական փաստաթղթերը: Այսպես, օրինակ, «Դատական ընտրություն, վարչարարություն և հաշվետվողականություն» Արեվելյան Եվրոպայում, Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում դատական անկախության վերաբերյալ Կիեվյան հանձնարարականների 7-րդ կետի համաձայն. *«Եթե սրեղծվում է դատական խորհուրդ, ապա դրա անդամ դատավորները պետք է ընտրվեն այլ դատավորների կողմից և ներկայացնեն ողջ դատական իշխանությունը, այդ թվում՝ առաջին աստիճանի դատարանների դատավորներին: Դատական խորհուրդներում չպետք է գերիշխող ազդեցություն ունենան վերաքննիչ դատարանների դատավորները: Այն դեպքերում, երբ խորհրդի կազմում նշանակվում է դատարանի նախագահ, նա պետք է վայր դնի դատարանի նախագահի լիազորությունները: Դատավորների կողմից ընտրված դատական խորհրդի կազմում զգալի թվով դատավոր անդամներից զարդ պետք է լինեն նաև իրավագիտության դասախոսներ. ցանկալի է ընդգրկել նաև փաստաբաններ, որպեսզի այն ավելի ներառական և թափանցիկ լինի: Այն երկրներում, որոնցում դատախազները չեն մտնում միևնույն կորպուսի մեջ, ինչ դատա-*

վորները, դատախազները պետք է չներառվեն դատական խորհրդի կազմում: Պետք է արգելել նաև իրավապահ և իրավակիրառ մարմինների այլ ներկայացուցիչների մասնակցությունը: Խորհրդի ղեկավարը չպետք է լինի պետության նախագահը կամ արդարադատության նախարարը: Դատական խորհրդի նախագահը պետք է ընտրվի անդամների թվից՝ ծայների մեծամասնությամբ: Դատական խորհրդի աշխատանքում չպետք է գերիշխող ազդեցություն ունենան իշխանության գործադիր և օրենսդիր ճյուղերի ներկայացուցիչները»: Բազմաթիվ այլ միջազգային իրավական փաստաթղթեր ևս հնարավոր (և նույնիսկ անհրաժեշտ) են համարում խորհուրդների կազմում դատավոր անդամների հետ մեկտեղ նաև ոչ դատավոր անդամների ընդգրկումը՝ պայմանով, որ վերջիններս ընտրվեն իրավաբան-գիտնականների, փաստաբանների հանրությունից, և բացառվի այդ խորհուրդների կազմում քաղաքական գործիչների, խորհրդարանի, գործադիր մարմնի ներկայացուցիչների գործունեությունը¹:

Ժողովրդավարություն իրավունքի միջոցով Եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով) այն տեսակետն է արտահայտել, որ խորհուրդը պետք է ունենա բազմազան կառուցվածք՝ դատավոր և ոչ դատավոր անդամների ընդգրկմամբ: Ընդ որում, խորհրդի դատավոր անդամները պետք է ընտրվեն այնպես, որ ապահովվի տարբեր աստիճանների դատավորների հավասարակշռված ներկայացվածությունը: Վենետիկի հանձնաժողովի գնահատմամբ դատական իշխանության անկախությունը ապահովող ինքնավար դատական խորհրդի ստեղծումը չի նշանակում, որ դատավորները պետք է լինեն ամբողջովին ինքնակառավարվող:

¹ Տե՛ս Եվրոպայի դատավորների խորհրդատվական խմբի թիվ 10 եզրակացության 23-րդ կետը, Venice Commission, Opinion on Recent Amendments to the Law on Major Constitutional provisions of the Republic of Albania, CDL-INF (1998) 009, 12-րդ կետը [http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-INF\(1998\)009-e](http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-INF(1998)009-e)

Դատական իշխանության վարչական կառավարումը չպետք է ամբողջովին լինի դատավորների ձեռքում: Ըստ այդմ, Վենետիկի հանձնաժողովի կարծիքով խորհրդի կառուցվածքում պետք է նախատեսել այնպիսի անդամների ներկայություն, ովքեր դատական իշխանության մաս չեն և ներկայացնում են պետական այլ մարմիններ, հասարակության ակադեմիական կամ մասնագիտական շրջանակներ: Վենետիկի հանձնաժողովի այս դիրքորոշման հիմնավորումն այն է, որ խորհրդի դերակատարումը վերաբերում է ոչ միայն դատական իշխանության անդամների շահերին, այլ նաև հասարակության ընդհանուր շահերին: Արդարադատության որակի և անաչառության նկատմամբ հսկողությունը դերակատարում է, որն առանձին դատավորի շահերից այն կողմ է: Խորհրդի դերակատարումը կոչված է բարձրացնելու քաղաքացիների վստահությունը դատական իշխանության նկատմամբ: Վենետիկի հանձնաժողովը նույնիսկ առաջարկել է, որ խորհրդի անդամների էական մասը լինեն ոչ դատավորներ՝ մասնագիտական համայնքի ներկայացուցիչներ, ինչը կապահովի դատական համակարգի շահառուների ներկայացվածությունը: Վենետիկի հանձնաժողովի գնահատմամբ խորհրդի կազմում հավասար թվով դատավոր և ոչ դատավոր անդամների նախատեսումը կարող է բացառել կորպորատիվիզմը և սեփական նեղ շահերով առաջնորդվելու վտանգը¹:

¹Տե՛ս Venice Commission, CDL-INF(1998)009, Opinion on recent amendments to the law on major constitutional provisions of the Republic of Albania, 9-12-րդ կետեր, CDL-AD(2007)028, Report on Judicial Appointments by the Venice Commission, 27-րդ և 30-րդ կետեր, CDL-AD(2014)008, Opinion on the draft Law on the High Judicial and Prosecutorial Council of Bosnia and Herzegovina, 30-31-րդ կետեր, CDL-AD(2002)012, Opinion on the Draft Revision of the Romanian Constitution, 66-րդ կետ, CDL-AD(2002)021, Supplementary Opinion on the Revision of the Constitution of Romania, 21-22-րդ կետեր, CDL-AD(2005)003, Joint opinion on a proposal for a constitutional law on the changes and amendments to the Constitution of Georgia by the Venice Commission and OSCE/ ODIHR, 102-րդ կետ, CDL-AD(2012)001, Opinion on Act CLXII of 2011

Վենետիկի հանձնաժողովի դիրքորոշումներում արտահայտված այս մտավախություններն արդիական են նաև գործող Արդարադատության խորհրդի կազմի տեսանկյունից: Հաշվի առնելով Արդարադատության խորհրդի դատավոր անդամների թվային գերակշռությունը՝ որոշակիորեն ձևական բնույթ է ստանում իրավաբան-գիտնականների մասնակցությունը խորհրդի գործունեությանը: Այսպես, օրինակ, նշված խնդրի մասնավոր դրսևորում է այն, որ գործող կարգավորման պայմաններում անգամ բոլոր իրավաբան-գիտնական անդամների կողմից կոնկրետ հավակնորդին դեմ քվեարկելը որևէ հետևանք չի կարող առաջացնել: Դատավոր անդամների ակնհայտ թվային գերակշռության պայմաններում խորհուրդը, պատկերավոր ասած, դառնում է դատական իշխանության ներքին սպասարկման մարմին, որի խնդիրը առավելապես դատական իշխանության ներքին նեղ խնդիրների լուծումն է: Այնինչ խորհրդի գործունեության հիմնական նպատակը դատական իշխանության անկախության ապահովումն է, որը, ինչպես նշվեց, ոչ այնքան և ոչ միայն դատական իշխանության, որքան առհասարակ պետության, ողջ հասարակության խնդիրն է: Այս պայմաններում առավել, քան ակնհայտ է խորհրդի ոչ իրավաչափ կախվածությունը դատական իշխանությունից: Ներքին անկախության բացակայության խնդիրն առավել ակնհայտ է դառնում գոյություն ունեցող իրավակարգավորման պայմաններում, համաձայն որի խորհրդի նիստերը հրավիրում և վարում է Վճռաբեկ դատարանի նախագահը:

Ուստի պատահական չէ, որ սահմանադրական բարեփոխումների հենց սկզբից խնդիր դրվեց ավելացնել ոչ դատավոր անդամների, մասնավորապես իրավաբան-գիտնականների թիվը խորհրդի կազմում և երաշխավորել վերջիններիս իրական մասն-

on the Legal Status and Remuneration of Judges and Act CLXI of 2011 on the Organisation and Administration of Courts of Hungary, 45-րդ կետ:

կացությունը դրա գործունեությանը, ինչը կարող էր նպաստել այս կառույցի, դրա գործունեության, արդյունքում նաև ողջ դատական համակարգի նկատմամբ հասարակական վստահության բարձրացմանը և ամրապնդմանը: Թերևս այս խնդրի լուծմանն են միտված Սահմանադրության 174-րդ հոդվածի արդեն իսկ հիշատակված կարգավորումները՝ համաձայն որոնց Բարձրագույն դատական խորհուրդը կազմված է տասն անդամից, որոնցից հինգը դատական իշխանության կողմից ընտրվող դատավորներ են, իսկ մյուս հինգը՝ իրավաբան գիտնականներ և այլ հեղինակավոր իրավաբաններ:

Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամների հետ կապված՝ միջազգային իրավական փաստաթղթերում քննարկվում է նաև վերջիններիս՝ որպես դատավորի լիազորությունների կասեցման խնդիրը: Այսպես, օրինակ, ԵԴԽԽ թիվ 10 եզրակացության (2007) Մաս 34-ը, ըստ որի. «ԵԴԽԽ-ն համարում է, որ Դատական մարմինների Խորհրդին անդամակցելը պետք է արտացոլի դատական իշխանության մասշտաբները և, հետևաբար, կատարման ենթակա աշխատանքների ծավալը: Չնայած այն հանգամանքին, որ պետություններն իրենք են որոշում կայացնում Դատական մարմինների Խորհրդի կազմում անձանց՝ լրիվ կամ ոչ լրիվ դրույքով ընդգրկվելու մասին, ԵԴԽԽ-ն նշում է, որ լրիվ դրույքով ընդգրկվածությունը ենթադրում է ավելի արդյունավետ աշխատանք և անկախության առավել ուժեղ երաշխիք: Այդուհանդերձ, անհրաժեշտ է ապահովել, որ Դատական մարմինների Խորհրդի կազմում ընդգրկված դատավորները չափազանց երկար ժամանակով չբացակայեն իրենց դատական գործունեությունից, որպեսզի, հնարավորության սահմանում, դատարանային պրակտիկայի հետ կապը պահպանվի:

Այս առումով, Սահմանադրության 174-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Դատական օրենսգրքով կարող է սահմանվել

Բարձրագույն դատական խորհրդում պաշտոնավարման ընթացքում դատավոր անդամների լիազորությունների կասեցման պահանջ:

Մեր կարծիքով ևս առավել նախընտրելի և քիչ խնդրահարույց է Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամների լիազորությունները չկասեցնելու մոդելը: Իսկ ինչ վերաբերում է աշխատանքային ծանրաբեռնվածությամբ պայմանավորված՝ խորհրդի աշխատանքներին ոչ արդյունավետ մասնակցության մտավախությանը, ապա խնդիրը կարող է լուծվել վերջիններիս՝ որպես դատավորների ծանրաբեռնվածությունը նվազեցնելու միջոցով, ինչպիսի կարգավորում նախատեսված է նաև ՀՀ գործող դատական օրենսգրքում:

3. Բարձրագույն դատական խորհրդի կազմավորման կարգը

2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով Սահմանադրության 174-րդ հոդվածի 1-3-րդ մասերի՝ արդեն իսկ հիշատակված կարգավորումներից բխում է, որ Բարձրագույն դատական խորհրդի կազմավորման հարցում լուրջ դերակատարում ունեն Դատավորների ընդհանուր ժողովը և ՀՀ Ազգային ժողովը:

Միջազգային իրավական փաստաթղթերի վերլուծությունը ցույց է տալիս, որ ընդհանուր մոտեցման համաձայն՝ դատական խորհուրդների դատավոր անդամները պետք է ընտրվեն դատական իշխանության կողմից¹: Ինչ վերաբերում է ոչ դատավոր անդամներին, ապա միջազգային իրավական կառույցների, մասնավորապես Ժողովրդավարություն իրավունքի միջոցով Եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողովի) գնահատմամբ դե-

¹Տե՛ս Venice Commission, CDL-AD(2007)028, Report on Judicial Appointments by the Venice Commission, 29-րդ կետ, CDL-AD(2008)006, Opinion on the Draft Law on the High Judicial Council of the Republic of Serbia, 76-րդ կետ:

մոկրատական հասարակության պայմաններում ողջամիտ է դատական խորհրդի կազմում ժողովրդի կամարտահայտության ներկայացվածությունը՝ ի դեմ ժողովրդի ներկայացուցչական մարմնի կողմից խորհրդի կազմի ձևավորման գործընթացին մասնակցության¹։ Սակայն այն դեպքում, երբ ոչ դատավոր անդամն ընտրվում է Խորհրդարանի կողմից, այդ անձինք չպետք է լինեն Խորհրդարանի անդամ, պետք է ընտրվեն որակյալ մեծամասնության կողմից՝ ունենալով ընդդիմադիր ուժերի զգալի աջակցություն, և պետք է ապահովեն հասարակության բազմաշերտ ներկայացվածությունը Դատական մարմինների Խորհրդի ընդհանուր կազմում²։

Այս տեսանկյունից Արդարադատության խորհրդի կազմավորման գործող կարգը որոշակիորեն խնդրահարույց է։ Խոսքը, մասնավորապես, վերաբերում է նրան, որ կիսանախագահական կառավարման ձևի պայմաններում, երբ Հայաստանի Հանրապետության նախագահի կարգավիճակն առավելապես ասոցացվում է գործադիր իշխանության ղեկավարի հետ, կարծում ենք անհամատեղելի է դատական համակարգը գործադիր իշխանության միջամտությունից զերծ պահելու միջազգային հիմնարար պահանջի երաշխավորման տեսանկյունից։ Բացի այդ, գործող կարգավորումը ոչ իրավաչափ է նաև ՀՀ նախագահին թե Արդարադատության խորհրդի կազմի ձևավորման գործընթացին մասնակցելու հնարավորություն, մասնավորապես երկու իրավաբան-գիտնականներ նշանակելու և թե արդարադատության խորհրդի լիազորություննե-

¹Տե՛ս Venice Commission, Opinion on Recent Amendments to the Law on Major Constitutional provisions of the Republic of Albania, CDL-INF(1998)009, 9-րդ կետ։

²Տե՛ս Venice Commission, Opinion on the Draft Law on Amendments to the Judicial System Act of Bulgaria, CDL-AD (2002) 015, 5-րդ կետ, Եվրոպայի դատավորների Խորհրդատվական խմբի թիվ 10 եզրակացության 32-րդ կետը։

րին փոխկապակցված կամ դրանց հաջորդող լիազորություններ (ՀՀ արդարադատության խորհրդի միջնորդությամբ դադարեցնել դատավորի լիազորությունների կամ նշանակել դատավոր) վերապահելու համատեքստում: Սակայն խորհրդարանական կառավարման ձևի պայմաններում էապես փոխվում է հանրապետության նախագահի դերակատարումն իշխանությունների տարանջատման համակարգում: Ընդ որում, նույն Վենետիկի հանձնաժողովը, ընդունելի համարելով օրենսդիր մարմնի կողմից դատական խորհրդի ոչ դատավոր անդամների ընտրության մոդելը, առանձին դեպքերում այն համարել է ավելի նախընտրելի, քան գործադիր իշխանության մասնակցությամբ մեխանիզմը¹: Վերոգրյալի հաշվառմամբ **իշխանությունների տարանջատման նոր համատեքստում երկրի նախագահին խորհրդի կազմավորման հարցում լուրջ դերակատարում վերապահելը ոչ խոցելի կարգավորում կլիներ այս մարմնի արտաքին անկախության երաշխավորման տեսանկյունից՝ ի տարբերություն առաջարկվող նոր լուծման, երբ խորհրդի ոչ դատավոր անդամներին ընտրելու է ՀՀ Ազգային ժողովը:** Այսպես, նոր սահմանադրական կարգավորումների համաձայն՝ Ազգային ժողովն է ընտրելու Վճռաբեկ դատարանի դատավորի առաջարկվող թեկնածուին՝ դատավորի յուրաքանչյուր տեղի համար Բարձրագույն դատական խորհրդի ներկայացրած երեք թեկնածուների թվից (Սահմանադրության 166-րդ հոդվածի 3-րդ մաս) և Վճռաբեկ դատարանի նախագահին՝ դարձյալ Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությամբ (Սահմանադրության 166-րդ հոդվածի 5-րդ մաս): Այս կարգավորման պայմաններում Բարձրագույն դատական խորհրդի արտաքին անկախության ապահովման խնդիրն առավել, քան արդիական է այն

¹Տե՛ս CDL-AD(2010)042, Interim Opinion on the Draft Law on the High Council for judges and Prosecutors (of 27 September 2010) of Turkey, 34-րդ կետ:

պարզ պատճառով, որ խորհրդի անդամների ուղիղ կեսին նշանակելու է ՀՀ Ազգային ժողովը, որը նաև ունի փոխկապակցված լիազորություններ խորհրդի հետ: Բացի այդ, ինչպես արդեն նշել ենք վերևում, Բարձրագույն դատական խորհրդին լուրջ դերակատարում է վերապահվել դատական իշխանության կազմակերպման, մասնավորապես, դատական բարձրագույն ատյանի դատավորների և նախագահի նշանակման հարցում: Եվ այս պարագայում Բարձրագույն դատական խորհրդի կազմավորման հարցում ՀՀ Ազգային ժողովի ծանրակշիռ դերակատարում վերապահելը վերջինիս կողմից դատական իշխանության կազմակերպական հարցերին հնարավոր ոչ իրավաչափ միջամտության վերաբերյալ որոշակի մտավախության տեղիք է տալիս¹:

4. Բարձրագույն դատական խորհրդի նախագահը

Ինչպես նշվեց, գործող օրենսդրական կարգավորման պայմաններում արդարադատության խորհրդի ներքին անկախության երաշխավորման տեսանկյունից խնդրահարույց է Արդարադա-

¹Ազգային ժողովի կողմից դատավորների ընտրության գործընթացին մասնակցության վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովն այն տեսակետն է արտահայտել, որ այն թեև առավել ժողովրդավարական մեխանիզմ է թվում, բայց կարող է նաև դատավորներին ներգրավել քաղաքական գործունեության մեջ և հանգեցնել գործընթացի քաղաքականացմանը: Խորհրդարանի կողմից դատավորների ընտրությունը հայեցողական ակտ է, և հետևաբար, անգամ եթե թեկնածություններն առաջարկվում են դատական խորհրդի կողմից, չի բացառվում, որ պառլամենտը ձեռնպահ կմնա առաջարկը մերժելուց: Վենետիկի հանձնաժողովն այն կարծքին է, որ խորհրդարանն անկասկած առավել ներքաշված է քաղաքական խաղերի մեջ և դատավորների ընտրությունը կարող է հանգեցնել քաղաքական գործարքների խորհրդարանում, որտեղ խորհրդանի յուրաքանչյուր անդամ կարող է ցանականալ ունենալ իր սեփական դատավորին: Venice Commission, Judicial Appointments, Opinion no. 403/2006 (CDL-AD(2007)028), 9-10-րդ կետեր, Opinion on the Draft Law on Judicial Power and Corresponding Constitutional Amendments of Latvia, CDL-AD (2002) 26, 22-րդ կետ:

տության խորհրդի նիստերը հրավիրելու՝ Վճռաբեկ դատարանի նախագահի լիազորությունը: Թեկուզև առանց քվեարկության իրավունքի երկրի բարձրագույն դատական ատյանի ղեկավարի՝ Արդարադատության խորհրդի նիստերին մասնակցությունը խորհրդի դատավոր անդամների նկատմամբ որոշակի ոչ իրավաչափ ներգործության վտանգ է պարունակում: Նման եզրահանգման օգտին է վկայում ներկայումս ձևավորված որոշակի պրակտիկան: Առանձին խնդիր է նաև այն, որ դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու իրավասությունը վերապահված է Արդարադատության խորհրդին, իսկ գործող օրենսդրական կարգավորման պայմաններում Վճռաբեկ դատարանի նախագահը կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող սուբյեկտ է, ով նաև նախագահում է իր իսկ կողմից հարուցված վարույթով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննություն իրականացնող Արդարադատության խորհրդի նիստը: Այս մտավախությանը հատուկ անդրադարձ է կատարվել նաև Հայաստանի Հանրապետության հետ դատաիրավական ոլորտում «Միասնական աջակցության շրջանակ 2017-2020» փաստաթղթում:

Դատական խորհրդի նախագահի ընտրության հարցի առնչությամբ որոշակի մոտեցումներ կան ձևավորված նաև միջազգային իրավական փաստաթղթերում: Այսպես, օրինակ, արդեն իսկ վերը հիշատակված Կիևյան հանձնարարականների 7-րդ կետի համաձայն՝ «Դատական խորհուրդներում չպետք է գերիշխող ազդեցություն ունենան վերաքննիչ (բարձրագույն) դատարանների դատավորները: Այն դեպքերում, երբ խորհրդի կազմում նշանակվում է դատարանի նախագահ, նա պետք է վայր դնի դատարանի նախագահի լիազորությունները: (...) Խորհրդի ղեկավարը չպետք է լինի պետության նախագահը կամ արդարադատության նախա-

րարը: Դատական խորհրդի նախագահը պետք է ընտրվի անդամների թվից՝ ձայների մեծամասնությամբ: (...)»:

Ինքնին խորհրդի կողմից իր կազմից խորհրդի նախագահի ընտրության մոդելն ընդունելի է նաև Եվրոպայի դատավորների խորհրդատվական խմբի, Վենետիկի հանձնաժողովի եզրակացությունների համատեքստում¹:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Բարձրագույն դատական խորհրդի ներքին անկախության երաշխավորման տեսանկյունից լուրջ իրավական հիմք է սահմանադրական այն կարգավորումը՝ համաձայն որի խորհուրդն իր կազմից Դատական օրենսգրքով սահմանված ժամկետով և կարգով ընտրում է խորհրդի նախագահ՝ հաջորդաբար դատավորների ընդհանուր ժողովի և Ազգային ժողովի կողմից ընտրված անդամներից (Սահմանադրության 174-րդ հոդվածի 7-րդ մաս): Այստեղ պետք է նշել, որ Սահմանադրության մեջ տեղ գտած ձևակերպում ամենևին չի նշանակում, որ բարձրագույն դատական խորհրդի նախագահն առաջինը պետք է ընտրվի խորհրդի դատավոր անդամների թվից: Ավելին, կարծում ենք, որ Դատական օրենսգրքով անհրաժեշտ է նախատեսել այնպիսի կարգավորում, որ առաջինը խորհրդի նախագահ ընտրվի ոչ դատավոր անդամների թվից և հինգ տարի ժամկետով: Կարծում ենք նաև, որ վերջինս անկախ խորհրդի մյուս անդամների կարգավիճակից, չպետք է համատեղի նախագահի պաշտոնը որևէ այլ գործունեության հետ: Մեր կարծիքով, այս լուծումը անհրաժեշտ է Բարձրագույն դատական խորհրդի ձևավորման և գործունեության հետ կապված օբյեկտիվորեն հնարավոր դժվարությունները հաղթահարելու և խորհրդի առավել արդյունավետ գործունեությունը ապահովելու համար:

¹ St' u Compilation of Venice Commission Opinions and Reports Concerning Courts and Judges, CDL-PI(2015)001 2015, Strasbourg, France, Եվրոպայի դատավորների խորհրդատվական խմբի թիվ 10 եզրակացություն:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք փաստել, որ Բարձրագույն դատական խորհրդի նոր սահմանադրական կարգավիճակի հիմքում դրված կարգավորումները որոշակիորեն լուծել են Արդարադատության խորհրդի կազմակերպման և գործունեության հետ կապված՝ գործնականում ի հայտ եղած խնդիրները: Սակայն առանձին դեպքերում հենց այս նոր կարգավորումներն են որոշակիորեն խնդրահարույց թվում. խոսքը, մասնավորապես, վերաբերում է Բարձրագույն դատական խորհրդի կազմավորման կարգի հետ կապված մտավախություններին: Այդուհանդերձ, այս կարգավորումների վերաբերյալ վերջնական հստակ եզրահանգում կարող է արվել միայն ճյուղային օրենսդրության մեջ դրանց ինկորպորացման և դրանց գործնական կիրառության արդյունքների վրա:

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ,
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ վաստակավոր իրավաբան

**ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԴԵՊԱՅԻՆ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

Հանրահայտ է, որ իրավական պետության ձևավորման և իրավունքի գերակայության սկզբունքի հետևողական իրացման գործում էական դերակատարում ունի պետական իշխանության այլ ճյուղերի նկատմամբ հակակշռող և կայունացնող գործառույթ իրականացնող դատական իշխանությունը[1]:

«Հակակշիռների և զսպումների համակարգի համատեքստում, նշում է Վ.Մ.Սավիցկին, դատական իշխանությանը բնորոշ է ոչ այնքան արդարադատության հիմնահարցը, որքան օրենսդիր և գործադիր մարմինների որոշումների և գործողությունների վրա ազդելու իրական հնարավորությունը»[2]:

Թեմայի շրջանակներում ցանկանում ենք առանձնացնել մի շարք հարցեր, որոնք ընթացող դատաիրավական բարեփոխումների համատեքստում ունեն հիմնարար և սկզբունքային նշանակություն: Մասնավորապես՝

1. ինչ կարգավիճակ է ստացել ՀՀ վճռաբեկ դատարանը ՀՀ Սահմանադրության 2015 թվականի փոփոխությունների արդյունքում,

2. ինչ եղանակներով է ՀՀ վճռաբեկ դատարանը իրականացնելու Սահմանադրությամբ ամրագրված նոր առաքելությունը, և

ինչպիսի լուծում կարող է ստանալ նախադեպային որոշումների պարտադիրության (կամ հաշվի առնելու) հարցը,

3. ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից տրված նորմատիվ-իրավական ակտերի մեկնաբանությունների և իրավական դիրքորոշումների հարաբերական կայունության (նախադեպային որոշումների փոփոխության և զարգացման) հիմնախնդիրը,

4. օրենքների և այլ նորմատիվ-իրավական ակտերի միատեսակ կիրառության ապահովման հնարավորության հարցը արտադատարանական եղանակներով,

5. ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների նշանակությունը օրինաստեղծ գործունեության համատեքստում:

Հայաստանի Հանրապետությունում 2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեի արդյունքում իրականացված սահմանադրական բարեփոխումներով սահմանադրաիրավական ամրագրում ստացան դատական իշխանության առաքելության, հիմնական գործառույթների և այն սպասարկող կառույցների կազմակերպման և գործունեության հիմքերը:

- ՀՀ Սահմանադրության (2005 թ. փոփոխություններով) 92-րդ հոդվածում ամրագրվել է, որ ՀՀ բարձրագույն դատական ատյանը (բացի սահմանադրական արդարադատության հարցերից) վճռաբեկ դատարանն է, որը կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը[3]:

Վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական առաքելությունից ելնելով գործող ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված է. «Որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները (այդ թվում նաև օրենքի մեկնաբանությունները) պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն

դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ»[4]:

ՀՀ Սահմանադրության (2015 թ. փոփոխություններով) 171-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Վճռաբեկ դատարանը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայելու միջոցով՝ ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը և վերացնում մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները[5]:

Դժվար չէ նկատել, որ ՀՀ Սահմանադրության 2015 թ. փոփոխություններով Վճռաբեկ դատարանի դերն ու նշանակությունը օրենսդրական ակտերի միատեսակ կիրառության ապահովման և արդարադատության իրականացման գործառույթների առումով էապես մեծացել է, ստանալով նոր բովանդակություն: Այսպես, Վճռաբեկ դատարանը կոչված է՝ ապահովելու ոչ միայն օրենքների, այլև այլ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը:

Բացի այդ, արդարադատություն իրականացնելիս, Վճռաբեկ դատարանը կոչված է՝ վերացնելու մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները:

Գործող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում որպես վճռաբեկ բողոք բերելու և բողոքը վարույթ ընդունելու հիմք նշված է դատական սխալը՝ նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի խախտումը, որը կարող էր ազդել գործի ելքի վրա (406, 412.2 հոդվածներ):

Նոր Սահմանադրությունում ամրագրելով մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները վերացնելու գործառույթը՝ ընդլայնվել են Վճռաբեկ դատարանի լիազորությունները դատական ակտերը բեկանելու կամ փոփոխելու տեսանկյունից: Այս առումով հատկանշական է, որ նոր քրեական դատավա-

րության օրենսգրքի նախագծի համաձայն Վճռաբեկ դատարանը առանձին դեպքերում վճռաբեկ բողոքի սահմաններից դուրս գալու իրավունք է ունենալու (եթե դրանով չի վատթարանում անձի վիճակը): Այս մոտեցումը էապես նպաստելու է մի կողմից իրավունքի զարգացմանը, մյուս կողմից, անկախ բողոքի հիմքերից, հիմնավորումներից և պահանջից, հայտնաբերելու հիմնարար խախտումների փաստը և համապատասխան որոշում կայացնելով՝ վերացնելու դրանք:

ՀՀ վճռաբեկ դատարանի գործառույթների առանձնահատկությունների վերաբերյալ, ՀՀ սահմանադրական դատարանը 2007 թվականի ապրիլի 9-ի թիվ ՍԴՈ-690 որոշմամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը «(...) ՀՀ վճռաբեկ դատարանի արդարադատական գործառույթը վճռաբեկության կարգով օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելն է, այսինքն.

- այն պետք է առաջին հերթին իրականացվի օրենքների և դրանց կատարումն ապահովող նորմատիվ այլ այնպիսի ակտերի իրավական բովանդակության մեկնաբանմամբ, որոնք ստորադաս դատարանների կողմից կիրառվել են (կամ չեն կիրառվել) դրանց տարաբնույթ իրավաընկալման արդյունքում,

- (...),

- վճռաբեկ դատարանի սահմանադրական գործառույթից է անմիջականորեն բխում ոչ միայն ընդհանուր և մասնագիտացված ստորադաս դատարանների թույլ տված դատական սխալներն իր իրավասության շրջանակներում ուղղելը, այլև այդ դատարանների կողմից կիրառված նորմատիվ ակտերի (դրանց դրույթների) միասնական ընկալման վերաբերյալ իրավական դիրքորոշում արտահայտելը:»:

Քրեական արդարադատության ոլորտին առնչվող քրեական պալատի նախադեպային որոշումները (600-ից ավելի), ներկայումս օժտված լինելով պարտադիրության հատկանիշով, ապահո-

վում են արդարադատության կանխատեսելիությունը, իրավական որոշակիությունը, նպաստում են միասնական, արդյունավետ և կանխատեսելի իրավակիրառ պրակտիկայի ձևավորմանը, ընձեռում են օրենսդրության անհստակությունները, հակասությունները և բացերը հաղթահարելու հնարավորությունը: Արդյունքում դատավարության և քրեական օրենսդրության նորմերի կամայական մեկնաբանության հնարավորությունը էականորեն նվազել է: Այն զգալիորեն նպաստել է ոչ միայն կոռուպցիոն ռիսկայնության չեզոքացմանը, այլև դատարանների ծանրաբեռնվածության նվազեցմանը:

Այսպես՝ 2014-2016թթ. ընթացքում ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում քրեական գործերով և մինչդատական վարույթի վերաբերյալ գործերով ընդհանուր առմամբ ավարտվել է 59.406 դատական գործ: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում 2014-2016թթ. ընթացքում ստացվել է 9502 վերաքննիչ բողոք՝ 8712 դատական ակտի դեմ (այսինքն՝ բողոքարկվել է ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների կողմից կայացված դատական ակտերի 14,6%-ը ($8712:59406*100=14,6\%$)):

2016 թվականին ՀՀ դատարանները ստացել են մոտավորապես 23.000 քրեական վարույթ: Վճռաբեկության կարգով բողոքարկվել է 1781 դատական ակտ, ինչը կազմում է կայացված ակտերի ընդամենը յոթ տոկոսը: Քրեական արդարադատության ոլորտում դժվար է գտնել քրեական պալատի կայացրած երկու որոշում, որոնցում նույն իրավական հարցի վերաբերյալ արտահայտված լինեն հակասական և իրարամերժ դիրքորոշումներ: Արդյունքում, վերջին տարիներին կտրուկ նվազել են նույնանման փաստական հանգամանքներով քրեական գործերին ստորադաս դատական ատյանների կողմից հակասական և կամայական լուծումներ տալու դեպքերը: Հատկանշական է նաև, որ քրեական պալա-

տի կայուն նախադեպային որոշումների շնորհիվ զգալիորեն կայունացել է ոչ միայն դատական, այլև քննչական պրակտիկան՝ դառնալով կանխատեսելի:

Ընդգծելով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու սահմանադրական գործառույթի իրականացման արդյունքում իրավահարաբերությունների կարգավորման գործում նշանակալից դերը՝ ստորև, որպես օրինակ, հարկ ենք համարում ներկայացնել ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից Նախադեպերով հայտնած դիրքորոշումների արդյունքում առկա դատական վիճակագրության առանձին տվյալները: Դատական պրակտիկայի ամփոփումը վկայում է, որ հստակեցված դիրքորոշումների արդյունքում տեղի է ունեցել ՀՀ քրեական օրենսգրքի ներքոնշյալ հոդվածներով դատի տրված անձանց թվի դինամիկ նվազում: Մասնավորապես, խուլիգանության (ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդված) հանցակազմի վերաբերյալ՝ Շահեն Հախվերդյանի գործով 2012 թվականի մարտի 30-ին կայացված թիվ ԱՎԴ/0014/01/11 որոշմամբ, զինծառայողների փոխհարաբերությունների կանոնադրային կանոնները ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում խախտելու (ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդված) հանցակազմի վերաբերյալ՝ Սրապիոն Հովհաննիսյանի գործով 2012 թվականի հունիսի 8-ին կայացված թիվ ՍԴ/0204/01/11 որոշմամբ, խարդախության (ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդված) հանցակազմի վերաբերյալ՝ Լիա Ավետիսյանի գործով 2011 թվականի փետրվարի 24-ին կայացված թիվ ԵԿԴ/0176/01/09 որոշմամբ, վաշխառության (ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդված) հանցակազմի վերաբերյալ՝ Քնարիկ Պետրոսյանի գործով 2012 թվականի հունիսի 8-ին կայացված թիվ ԵԿԴ/0102/01/11 որոշմամբ, ծեծի (ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդված) հանցակազմի վերաբերյալ՝ Ծովինար և

Արևիկ Սահակյանների գործով 2012 թվականի նոյեմբերի 1-ին կայացված թիվ ԱՐԴ/0176/01/11 որոշմամբ [6] և այլն:

ՀՀ վճարել դատարանի վերը նշված որոշումներով պայմանավորված, հարկ է նշել, որ խուլիգանության համար՝ 2014 թվականին՝ դատապարտվել է 133 անձ, 2015 թվականին 115 անձ, 2016 թվականին 79 անձ, զինծառայողների փոխհարաբերությունների կանոնադրային կանոնները ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում խախտելու համար 2014 թվականին՝ 238 անձ, 2015 թվականին 189 անձ, 2016 թվականին՝ 101 անձ:

Համեմատության արդյունքում կարող ենք նշել, որ, ՀՀ վճարել դատարանի կողմից վերը նշված Նախադեպերի կայացումից հետո, 2016 թվականին 2014 թվականի համեմատությամբ, խուլիգանության համար դատապարտվածների թիվը նվազել է 54-ով (41%-ով), իսկ զինծառայողների փոխհարաբերությունների կանոնադրային կանոնները ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում խախտելու համար դատապարտվածների թիվը՝ 137-ով (57.6%-ով):

Զգալիորեն նվազել են նաև ծեծի դեպքերը: Նշված նախադեպային որոշման մեջ պալատը իրավական դիրքորոշումներ է արտահայտել տվյալ հանցակազմի հատկանիշների առանձնահատկությունների վերաբերյալ, մասնավորապես, մեկ ապտակի իրավական գնահատման, ծեծը խոշտանգումից սահմանազատելու և այլ վիճահարույց հարցերի առնչությամբ: Համեմատության համար նշենք, որ 2012 թվականին տվյալ հանցակազմի հաշվին գրանցվել է անձի առողջության դեմ ուղղված հանցագործությունների աճ՝ շուրջ 50%-ով: Նախադեպային որոշում կայացնելուց հետո, տվյալ հանցատեսակները նվազել են մոտ 30%-ով:

Վճարել դատարանի նախադեպային որոշումների շարքում սկզբունքային նշանակություն ունեն խարդախության հանցակազ-

մի վերաբերյալ արտահայտած դիրքորոշումները, որոնք էապես նպաստեցին խարդախությունը որպես հանցագործություն քաղաքացիաիրավական գործարքներից սահմանազատելու, և մյուս կողմից՝ խարդախությունը վաշխառությունից տարանջատելու հարցում: Այդ դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նաև շուկայական հարաբերությունների կայունացման և զարգացման համատեքստում:

Արդյունքում, վերջին տարիների ընթացքում հանցավորության վիճակը և մակարդակը քանակական և որակական առումով շոշափելի դրական փոփոխությունների է ենթարկվել:

Հարկ է նշել, որ նախադեպային որոշումները էական դերակատարություն ունեն արդարացման դատական ակտերի կայացման հարցում: Այսպես՝ 2009 թվականին արդարացվել է դատապարտյալների 0,7%-ը, իսկ 2016 թվականին ՀՀ դատարանների կողմից կայացվել է 160 արդարացման դատական ակտ 187 անձի վերաբերյալ, ինչը կազմում է դատապարտյալների 4,5 %-ը:

Նշվածը փաստում է, որ ներկայումս ՀՀ վճռաբեկ դատարանի գործունեության արդյունքում դատական պաշտպանությունը դարձել է արդյունավետ և անձանց համար կանխատեսելի:

Պատահական չէ, որ ՀՀ նոր քրեական դատավարության օրենսգրքի նախագծում (հոդված 16-րդ) առաջարկվում է Վճռաբեկ դատարանի որոշումները նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ պարտադիր դարձնել ոչ միայն ստորադաս դատարանների, այլ նաև քրեական վարույթն իրականացնող բոլոր մարմինների համար: Դա ճիշտ մոտեցում է, մանավանդ, որ քրեական վարույթն իրականացնող մարմինները նույնպես ղեկավարվում են պալատի որոշումներով: Պատահական չէ, որ քրեական պալատի որոշումների ուժ հատորանոց ժողովածուները և գիտագործնական մեկնաբանությունները, որոնք լույս են տեսել ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի աջակցությամբ, դարձել են

իրավաբանի «սեղանի գիրք» (Քաղաքացիական և վարչական գործերով նախադեպային որոշումների ժողովածուները հրատարակվում են միջազգային համագործակցության գերմանական ընկերության (GIZ) աջակցությամբ): Այլ խնդիր է, երբ հանրությունը չի ընդունում այս կամ այն նախադեպային որոշումը կամ երբ տեսականորեն, օրինակ՝ նույն իրավական հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանը արտահայտի իրարամերժ դիրքորոշումներ:

Ինչպես նշվեց, քրեական պալատի կայացրած որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումները նման խնդիրներ մինչև օրս չեն առաջացրել: Դրանք հստակ, պարզ և կանխատեսելի են դարձնում իրավակիրառ պրակտիկան: Անհրաժեշտության դեպքում Վճռաբեկ դատարանը կարող է փոփոխել նախադեպային որոշումները, քանի որ իրավունքի զարգացումը ենթադրում է նաև հետագա զարգացում (ժամանակի ընթացքում կարող են փոփոխվել օրենքները, անհրաժեշտություն առաջանա նախորդ որոշումներում արտահայտած դիրքորոշումների կիրառելիության հարցերի հստակեցումը և այլն):

Այլ կերպ՝ իրավունքի զարգացման և իրավական որոշակիության սկզբունքի պահանջներին համահունչ իրավակիրառ պրակտիկայի կայացման գործում էական նշանակություն ունեն Վճռաբեկ դատարանի կողմից տրված նորմատիվ իրավական ակտերի մեկնաբանությունների հարաբերական կայունությունը:

Դատական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ Վճռաբեկ դատարանի կողմից բարձրացված խնդրով թիվ ՎԴ/1346/05/10 վարչական գործով որդեգրվել է հետևյալ դիրքորոշումը. *«Իրավունքի զարգացմանը նպաստելու գործառույթը ենթադրում է ոչ միայն Վճռաբեկ դատարանի կողմից օրենքի միատեսակ կիրառության հարցում միասնական դիրքորոշման ձևավորում՝ մասնավորապես, իրավական նորմի մեկնաբանության արդյունքում, այլև ձևավորված դիրքորոշման հետագա զարգացում,*

որն իրավաչափորեն կարող է հանգեցնել Վճռաբեկ դատարանի կողմից արդեն իսկ մեկնաբանված նորմի նոր մեկնաբանման: Նման իրավիճակներում կարևորվում է Վճռաբեկ դատարանի որոշման՝ որպես իրավական ակտի, ժամանակի ընթացքում գործողության, ինչպես նաև նախորդ որոշումներում արտահայտած դիրքորոշումների կիրառելիության հարցերի հստակեցումը:

Իրավունքի զարգացմանը նպաստելու գործառույթի նպատակից և բովանդակությունից տրամաբանորեն բխում է, որ իրավունքի զարգացման արդյունքում ձևավորված նոր դիրքորոշումը պետք է գերակայի նախորդ դիրքորոշման նկատմամբ և հիմք ընդունվի Վճռաբեկ դատարանի նոր դիրքորոշումը՝ ձևավորած որոշման կայացման պահին դատարանների վարույթներում գտնվող գործերի լուծման համար: Այլապես կիմաստազրկվի իրավունքի զարգացմանը նպաստելու գործառույթը»[7]:

Համեմատության համար հարկ է նկատել, որ «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (հոդված 68, մաս 14) թույլ է տալիս Սահմանադրական դատարանին վերանայել իր որոշումը, այդ թվում՝ դիրքորոշումը միայն, եթե նախորդ որոշումից հետո անցել է առնվազն 7 տարի, և եթե առկա է հետևյալ պայմաններից մեկը.

1) փոփոխվել է Սահմանադրության՝ տվյալ գործով կիրառված դրույթը.

2) ի հայտ է եկել տվյալ գործով կիրառված Սահմանադրության դրույթի այնպիսի նոր ընկալում, որի առկայությամբ նույն հարցի վերաբերյալ կարող է ընդունվել սահմանադրական դատարանի այլ որոշում, և եթե տվյալ հարցն ունի սկզբունքային սահմանադրաիրավական նշանակություն:

Վերոշարադրյալ կարգավորման օրինակով, առաջարկվել է Նախագծում համամասնորեն սահմանել, որ Վճռաբեկ դատարանը կարող է փոխել իր նախկինում արտահայտած իրավական դիրք-

քորոշումը, եթե փոփոխվել է կիրառված օրենքի կամ նորմատիվ այլ իրավական ակտի դրույթը կամ ի հայտ է եկել այդ այնպիսի նոր ընկալում, որի առկայությամբ նույն հարցի վերաբերյալ կարող է ընդունվել Վճռաբեկ դատարանի այլ որոշում, և եթե տվյալ հարցն ունի սկզբունքային նշանակություն օրենքի միատեսակ կիրառության ապահովման համար: Ակնհայտ է, որ նշված պայմանների առկայությունը և դրանց ազդեցությամբ՝ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման փոփոխման անհրաժեշտությունը պետք է պատշաճ փաստարկվի Վճռաբեկ դատարանի կողմից:

Վճռաբեկ դատարանի քրեական պալատի 2014 թվականի հոկտեմբերի 31-ի Գևորգ Խնուսյանի թիվ ԵԷԴ/0030/01/12 գործով որոշմամբ արձանագրել է՝ «Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերաքննիչ դատարանի կողմից գործը նոր քննության ուղարկելու և նոր քննության ծավալ սահմանելու վերաբերյալ որոշման կատարման պարտադիրության վերոշարադրյալ պահանջները վերաբերելի են նաև Վճռաբեկ դատարանի կողմից կայացվող դատական ակտին: Այլ խոսքով՝ ընդհանուր կանոնի համաձայն ստորադաս դատարանն իրավասու չէ դուրս գալ Վճռաբեկ դատարանի որոշմամբ սահմանված գործի նոր քննության ծավալներից և, միևնույն ժամանակ, պարտավոր է կատարել գործի նոր քննության ծավալով սահմանված անհրաժեշտ դատավարական գործողությունները: Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները և դրանով սահմանված նոր քննության ծավալը պարտադիր են ստորադաս դատարանի համար, ուղղորդում են գործի նոր քննությունը, սակայն չեն կանխորոշում դրա արդյունքը:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ Վճռաբեկ դատարանը բացառիկ դեպքերում, երբ առկա է նախկինում ձևավորված դիրքորոշման վերանայման օբյեկտիվ անհրաժեշտություն, կարող է զարգացնել կամ փոփոխել իր նախկին դիրքորոշումը: Դա պայ-

մանավորված է Վճռաբեկ դատարանի կողմից օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառնության իրացման անհրաժեշտությամբ և յուրաքանչյուր դեպքում պետք է թխի օրենքի միատեսակ կիրառության ապահովման բովանդակությունից: Մասնավորապես, օրենքի միատեսակ կիրառությունն ապահովվում է մեկնաբանման փարբեր հնարքների գործադրմամբ օրենքի իմաստի բացահայտման միջոցով, հետևաբար, օրենքի յուրաքանչյուր փոփոխություն, որը հանգեցնում է օրենքի իմաստի փոփոխության, ենթադրում է նաև օրենքի միատեսակ կիրառության վերաբերյալ Վճռաբեկ դատարանի դիրքորոշման փոփոխություն: Վճռաբեկ դատարանի դիրքորոշումների փոփոխության համար հիմք կարող են հանդիսանալ նաև իրավունքի զարգացումը, մարդու իրավունքների պաշտպանության երաշխավորումը, Հայաստանի Հանրապետության համար պարտադիր միջազգային-իրավական ակտերի և ՀՀ Սահմանադրության պահանջների ներդրումը իրավակիրառ պրակտիկա, դրանց նորմերի և սկզբունքների անմիջական գործողությունն ապահովելը և այլն (տե՛ս Լուսինե Բաբայանի գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի մարտի 30-ի թիվ ԵԿԴ/0093/11/11 որոշման 13-14-րդ կետերը):

Բացի այդ Վճռաբեկ դատարանի որոշմամբ սահմանված նոր քննության ծավալը ստորադաս դատարանի կողմից չպահպանելու համար որպես բացառիկ հանգամանք կարող է հանդիսանալ գործի նոր քննության ընթացքում առաջացած այնպիսի հանգամանքը, որը չի կարող հանգեցնել Վճռաբեկ դատարանի դիրքորոշման փոփոխությանը, սակայն պայմանավորում է տվյալ գործի ելքը (օրինակ՝ համաներման ակտի ընդունումը, արարքի ապաքրեականացումը, քրեական գործի վարույթը բացառող այլ հանգամանքի ի հայտ գալը և այլն):

Վերոգրյալով պայմանավորված օրենսդիրը նախատեսել է Վճռաբեկ դատարանի որոշման պարտադիրության ընդհանուր

կանոնից բացառություն: Դատական ակտ կայացնելիս ստորադաս դատարանը կարող է չկատարել Վճռաբեկ դատարանի որոշման պահանջները, որի դեպքում սակայն ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ պետք է հիմնավորի այնպիսի բացառիկ հանգամանքի առկայությունը, որի պայմաններում Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտած դիրքորոշումը կիրառելի չէ Կոլյալ գործով կամ նոր քննությունը չի կարող կատարվել սահմանված ծավալով:

Այսպիսով, վճռաբեկ դատարանի՝ որպես բարձրագույն դատական արյանի կարգավիճակը ենթադրում է, որ

ա^Բ վճռաբեկ դատարանը՝ իրականացնելով դատական վերանայում, ունի դատական սխալներն ուղղելու իրավասություն,

բ^Բ վճռաբեկ դատարանն անմիջականորեն կամ միջնորդավորված եղանակով ուղղահայաց հարաբերվում է առաջին արյանի և վերաքննիչ դատարանների հետ,

գ^Բ վճռաբեկ դատարանի որոշման մեջ շարադրված իրավական դիրքորոշումները պարտադիր են ստորադաս դատարանների համար,

դ^Բ վճռաբեկ դատարանի՝ քննության նոր ծավալ սահմանելու վերաբերյալ որոշման կատարումն ստորադաս դատարանների կողմից կրում է պարտադիր բնույթ, բացառությամբ առանձին դեպքերի»[8]:

Ներկայումս ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներն, օժտված լինելով պատադիրության հատկանիշով, ապահովում են արդարադատության կանխատեսելիությունը, իրավական որոշակիությունը, միասնական դատական պրակտիկայի առկայությունը, օրենսդրության անհստակությունները և բացերը հաղթահարելու հնարավորությունը:

Կանխատեսելի, հետևաբար նաև վստահելի արդարադատություն ձևավորելու փուլերից առաջինը՝ օրենքի միատեսակ կի-

րառությունն ապահովելն է, որն իր նպատակին չէր ծառայի, եթե չլիներ դրան հաջորդող երկրորդ փուլը՝ կայացված նախադեպային որոշումների կիրառության ապահովումը: Այս գործընթացն ուղղված է, մի կողմից, օրենքի որոշակիության ապահովմանը, որպեսզի յուրաքանչյուր անձի համար կանխատեսելի լինի, թե ինչ ճակատագիր կարող է ունենալ գործը, իսկ մյուս կողմից՝ օրենքի առջև բոլորի հավասարության ապահովմանը, որպեսզի անձանց նկատմամբ նույն կանոնները նույն կերպ կիրառվեն, և ընդհանուր բնույթ ունեցող կանոնների կամայական մեկնաբանման հնարավորությունը նվազի:

Հատկանշական է, որ նախադեպային բնույթի որոշումները դարձել են նաև ուսանողների, մագիստրոսների, ասպիրանտների, գիտական և այլ կազմակերպությունների քննարկումների առարկա: Չկա մի գիտագործնական վերլուծություն, որը նվիրված չլինի նյութական և դատավարական իրավունքի հիմնահարցերին, այդ թվում՝ ատենախոսություն, որում օգտագործված չլինեն նախադեպային որոշումներ[9]:

Վճռաբեկ դատարանը որոշիչ դեր է կատարում չափանիշների սահմանման և ՄԻԵԴ նախադեպային իրավունքի և Սահմանադրական դատարանի որոշումների ճիշտ կիրառման առումով ստորադաս դատարաններին ուղղորդելու հարցում: Ուղղորդման համար անհրաժեշտ չափանիշների սահմանումն էլ անկասկած Վճռաբեկ դատարանի խնդիրն է: Այս կապակցությամբ հարկ է ընդգծել, որ վերոնշյալ չափանիշների բացակայության պայմաններում մի քանի անգամ կավելանա բոլոր ատյանների դատարանների ծանրաբեռնվածությունը: Ծանրաբեռնվածության աճի վերաբերյալ կանխատեսումը հիմնված է այն հանգամանքի վրա, որ եթե օրենքի միատեսակ կիրառության շրջանակներում Վճռաբեկ դատարանի կողմից կայացված որոշումները ստորադաս դատարանների համար պարտադիր են, ապա դատավարության կողմե-

րի համար կանխատեսելի է, թե նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ դատարանն ինչ ուղենիշներով է ղեկավարվելու, և շատ անգամ ձեռնպահ է մնում անհարկի դատարան դիմելուց կամ դատական ակտը բողոքարկելուց: Մինչդեռ, եթե օրենքի միատեսակ կիրառության շրջանակներում Վճռաբեկ դատարանի կողմից կայացված որոշումները ստորադաս դատարանների համար պարտադիր չեն, դատավորության կողմերը ստիպված են լինելու յուրաքանչյուր դեպքում դիմել դատարան կամ բողոքարկել դատարանի կողմից կայացված ակտը, քանի որ նրանց համար կանխատեսելի չէ, թե նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ դատարանն ինչ դատական ակտ է կայացնելու:

Արդյունքում, վերջին տասնամյակում նվազագույնի են հասել նույնանման փաստական հանգամանքներով գործերին ստորադաս դատական ատյանների կողմից հակասական լուծումներ տալու դեպքերը:

Ինչպես արդեն նշվեց, Վճռաբեկ դատարանը իր սահմանադրաիրավական գործառույթներն իրականացնում է կոնկրետ գործերով (վարույթներով) արդարադատություն իրականացնելու միջոցով: Միևնույն ժամանակ, իրավունքի զարգացմանը և միասնական դատական պրակտիկայի ապահովմանը կարող են նպաստել նաև այսպես կոչված արտադատարանական մարմինները: Այսպես՝ գործող օրենսդրության շրջանակներում օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի ամփոփման և իրավակիրառ պրակտիկայում առաջացած վիճահարույց հարցերի վերաբերյալ պարզաբանումներ տալու պարտականությունը դրված է ՀՀ դատարանների նախագահների խորհրդի և ՀՀ դատական դեպարտամենտի վրա: Չնայած նրան, որ նշված մարմինները կայացրել են դատական պրակտիկային առնչվող բազմաթիվ որոշումներ, այնուամենայնիվ ճիշտ ենք համարում, որ այդ գործառույթների իրականաց-

ման պարտականությունը Դատարանների նախագահների խորհրդից փոխանցվելու է Բարձրագույն դատական խորհրդին: Չնայած որ դատական պրակտիկայի ամփոփման նյութերը պարտադիր չեն դատարանների համար, սակայն դրանք, ունենալով ուղղորդող նշանակություն, կարող են նպաստել օրենքների և այլ իրավական ակտերի նորմերի միատեսակ ընկալմանն ու կիրառմանը: Ուստի, ՀՀ վճռաբեկ դատարանը և ՀՀ բարձրագույն դատական խորհուրդը պետք է ապահովեն կանխատեսելի և արդյունավետ միասնական դատական պրակտիկան:

ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումները էական նշանակություն ունեն նաև օրինաստեղծ գործունեության համար: Ուշագրավ է, որ նախադեպային որոշումներում արտահայտած իրավական եզրահանգումները հաշվի են առնվել գործող օրենսդրությունը բարեփոխելիս: Դրանց զգալի մասը ներառված է նաև նոր քրեական և քրեադատավարության օրենսգրքերի նախագծերում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- 1 Հայաստանի Հանրապետության Դատական նոր օրենսգրքի հայեցակարգ - Եր., 26 հուլիսի 2016թ., էջ 2
2. Савицкий В.М. Прошу суда защиты. Защита прав человека в современном мире.-М., 1993.-с.25
3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (2005 թ. փոփոխություններով)
4. Հայաստանի Հանրապետության Դատական օրենսգիրք: Ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 21.02.2007թ.
5. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (2015 թ. փոփոխություններով)
6. ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի որոշումների ժողովածու, հատոր 3 (2011թ.), հատոր 4 (2012թ.)

7. ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 2013 թ. մայիսի 24-ի թիվ ՎԴ/1346/05/10 որոշում (4-րդ կետ, ա ենթակետ)

8. ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի 2014 թ. հոկտեմբերի 31-ի Գևորգ Խնուսյանի վերաբերյալ թիվ ԵԷԴ/0030/01/12 որոշում (կետ 18)

9. «Հայաստանի Հանրապետության Դատական օրենսգիրք» ՀՀ Սահմանադրական օրենքի նախագծի վերաբերյալ ՀՀ դատական իշխանության ինքնակառավարման մարմինների առաջարկությունները, ուղարկվել է ՀՀ Արդարադատության նախարարին 27.02.2017թ., էջ 4-8:

Արդարադատության ակադեմիայի
գիտական աշխատանքի գծով պրոռեկտոր,
ՀՀ Սահմանադրական դատարանի խորհրդական,
իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄԸ**

Իրավունքի գերակայության սկզբունքի իրացման, մարդու հիմնական իրավունքների և ազատությունների երաշխավորման սահմանադրական մեխանիզմների կատարելագործման, իշխանությունների լիարժեք հավասարակշռման և հանրային կառավարման արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունից ելնելով՝ ՀՀ Նախագահի 2013թ. սեպտեմբերի 4-ի հրամանագրով ստեղծվեց սահմանադրական բարեփոխումների մասնագիտացված հանձնաժողովը, որը պատրաստեց նշված բարեփոխումների հայեցակարգը և 2014թ. հոկտեմբերի 15-ին ներկայացրեց այն Հանրապետության Նախագահին: Հարկ է նշել, որ 2014թ. հոկտեմբերի 10-11-ին Եվրոպայի Խորհրդի (Վենետիկի հանձնաժողովը) «Հանուն ժողովրդավարության՝ իրավունքի միջոցով Եվրոպական հանձնաժողովը» իր 100-րդ ժողովում եզրակացություն ընդունեց Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի վերաբերյալ՝ գնահատելով վերջինս որպես կոնկրետ փոփոխությունների փաթեթի պատրաստման արժեքավոր և լավ հիմք, որը կամրապնդի ժողովրդավարական սկզբունքները և անհրաժեշտ պայմաններ կստեղծի երկրում իրա-

վունքի գերակայության և մարդու իրավունքների հարգման ապահովման համար¹: 2015թ. մարտի 14-ին Հանրապետության Նախագահը հավանություն տվեց Հանձնաժողովի ներկայացրած հայեցակարգին, որի հիման վրա պատրաստվեց նաև կոնկրետ փոփոխությունների փաթեթը, որը և ընդունվեց 2015թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեում:

Իրավունքի գերակայության սկզբունքի կիրառման, մարդու հիմնական իրավունքների և ազատությունների երաշխավորման սահմանադրական մեխանիզմների կատարելագործման համատեքստի կարևորագույն փոփոխություններ դարձան Հայաստանի Հանրապետության սահմանադրական արդարադատության ինստիտուտին վերաբերող բարեփոխումները, ինչն անհրաժեշտ է դիտարկել սույն զեկույցի շրջանակներում:

Նախ, նշենք, որ 2015թ. սահմանադրական բարեփոխումների արդյունքում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 103-րդ հոդվածն ամրագրեց, որ Ազգային ժողովի կանոնակարգը, Ընտրական օրենսգիրքը, Դատական օրենսգիրքը, Սահմանադրական դատարանի մասին օրենքը, Հանրաքվեի մասին օրենքը, Կուսակցությունների մասին օրենքը և մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքը **սահմանադրական օրենքներ** են և ընդունվում են պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով: Հետևաբար, հետագա օրենսդրական զարգացումների համատեքստում Հայաստանի Հանրապետությունում վերոհիշյալ սահմանադրական օրենքներն ընդունելու անհրաժեշտություն առաջացավ:

«Սահմանադրական դատարանի մասին» օրենքի օրինագծի մշակման համար ստեղծվեց աշխատանքային խումբ, որը և մշակեց նշված օրինագիծը: Այժմ «Սահմանադրական դատարանի մա-

¹ http://moj.am/storage/uploads/CDL-AD2014027-e_.pdf

սին» սահմանադրական օրենքի օրինագիծը հանրային քննարկման է ներկայացված www.e-draft.am համացանցային կայքում:

Ինչ վերաբերվում է սահմանադրական արդարադատության ինստիտուտի բարեփոխմանը, նշենք, որ սահմանադրական բարեփոխումների արդյունքում փոխվեց թե՛ Սահմանադրական դատարանի դատավորների նշանակման կարգը, վերջիններիս առաջադրվող պահանջները, թե՛ Սահմանադրական դատարանի լիազորությունները:

Ի տարբերություն նախորդ կարգավորումների, որոնց համաձայն Սահմանադրական դատարանի անդամները նշանակվում էին Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի կողմից՝ լինելով անփոփոխ և պաշտոնե զբաղեցնելով մինչև 65 տարեկանը, այժմ Սահմանադրական դատարանի անդամներին ընտրելու է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ծայրերի առնվազն երեք հինգերորդով՝ տասներկու տարի ժամկետով: Համաձայն Սահմանադրության 166-րդ հոդվածի (2015թ. դեկտեմբերի 6-ի փոփոխություններով) Սահմանադրական դատարանը բաղկացած է ինը դատավորից, որոնցից երեքն ընտրվում են Հանրապետության Նախագահի առաջարկմամբ, երեքը՝ Կառավարության առաջարկմամբ, երեքը՝ Դատավորների ընդհանուր խորհրդի առաջարկմամբ: Ընդ որում, Դատավորների ընդհանուր խորհրդը կարող է առաջարկել միայն դատավորների: Միևնույն անձը կարող է Սահմանադրական դատարանի անդամ ընտրվել միայն մեկ անգամ:

Այսուհետ Սահմանադրական դատարանի նախագահին և փոխնախագահին իր կազմից ընտրելու է Սահմանադրական դատարանը՝ վեց տարի ժամկետով, առանց վերընտրման իրավունքի: Հարկ է նշել, որ ըստ նախկին կարգավորումների Սահմանադրական դատարանի նախագահը նշանակվում էր Ազգային ժողո-

վի կողմից, իսկ Ազգային Ժողովի չնշանակելու դեպքում՝ Հանրապետության Նախագահի կողմից:

Սահմանադրական բարեփոխումների արդյունքում փոփոխվեցին նաև Սահմանադրական դատարանի դատավորների առաջադրվող պահանջները: Համաձայն Սահմանադրության 165-րդ հոդվածի (2015թ. դեկտեմբերի 6-ի փոփոխություններով), Սահմանադրական դատարանի դատավոր կարող է ընտրվել քառասուն տարին լրացած իրավաբանը, որը Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, ունի ընտրական իրավունք, բարձր մասնագիտական որակ, առնվազն տասնհինգամյա մասնագիտական աշխատանքային փոր և բարձրագույն կրթություն: «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանեց նաև Սահմանադրական դատարանի դատավորներին առաջադրվող լրացուցիչ պահանջ, այն է՝ բարձր բարոյական որակող օժտված լինելու պահանջը, որը, մեր կարծիքով, թեկնածուներին Սահմանադրական դատարանի դատավոր ընտրելու կարևոր նախապայման է:

2015 թ. սահմանադրական բարեփոխումների արդյունքում ՀՀ Սահմանադրության մեջ կատարված Սահմանադրական դատարանի դատավորի կարգավիճակին վերաբերող կարևոր փոփոխություն էր ՍԴ դատավորի գործառույթային անձեռնմխելիության նախատեսումը: Նշված ինստիտուտի էությունն այն է, որ ՍԴ դատավորի նկատմամբ քրեական գործ կարող է հարուցվել միայն Սահմանադրական դատարանի համաձայնությամբ, բացառապես **իր լիազորությունների կատարման հետ կապված** դեպքերում: ՍԴ դատավորը **իր լիազորությունների կատարման հետ կապված** առանց Սահմանադրական դատարանի համաձայնության չի կարող ազատագրվել, բացառությամբ այն դեպքերի, երբ նա ձերբակալվել է հանցագործության կատարման պահին կամ անմիջապես դրանից հետո: Այս դեպքում ազատագրվումը չի կարող տևել յոթանասուն երկու ժամից ավել: Սահմանադրական դատարանի

դատավորի ազատագրկման մասին անմիջապես տեղյակ է պահվում ՍԴ նախագահը: Նշված դրույթները տեղ են գտել «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրինագծում, որը նաև սահմանում է, որ ՍԴ դատավորին որպես մեղադրյալ քրեական պատասխանատվության ենթարկելու կամ նրա նկատմամբ խափանման միջոց ընտրելու մասին որոշումը կարող է կայացնել միայն ՀՀ Գլխավոր դատախազը:

Անհրաժեշտ է նաև հաշվի առնել, որ համաձայն ՀՀ Սահմանադրության (2015թ. դեկտեմբերի 6-ի փոփոխություններով) ՍԴ դատավորի լիազորությունների դադարեցման հարցը լուծող վերջնական մարմին դարձավ հենց Սահմանադրական դատարանը: Մասնավորապես՝ համաձայն Սահմանադրության 164 հոդվածի ՍԴ դատավորի լիազորությունները դադարեցվում են **Սահմանադրական դատարանի որոշմամբ**՝ անհամապատասխանելիության, քաղաքական գործունեությամբ զբաղվելու, առողջական վիճակից ելնելով պաշտոնը զբաղեցնելու անհնարինության, ինչպես նաև լուրջ կարգապահական խախտում կատարելու դեպքում:

Նշենք, որ սահմանադրական բարեփոխումների արդյունքում զգալիորեն փոփոխվել է ՀՀ Սահմանադրական դատարանի իրավազորությունը: Սահմանադրական դատարանին տրվել են նոր կարևորագույն լիազորություններ: Մասնավորապես՝ այս պահից մինչև Սահմանադրության փոփոխությունների նախագծի ընդունումը, հանրաքվեի դրվող իրավական ակտերի նախագծերի Սահմանադրությանը համապատասխան լինելը որոշելու է Սահմանադրական դատարանը: Հատկապես նշանակալի է սահմանադրական փոփոխությունների նախագծի Սահմանադրությանը համապատասխան լինելու որոշման լիազորությունը: Գտնում եմ, որ նշված լիազորությունն իրականացնելիս Սահմանադրական դատարանը պետք է դիտարկի դրանց համապատասխանությունը Սահմանադրության անփոփոխ հոդվածներին, ինչպես նաև Սահ-

մանադրությամբ նախատեսված սահմանադրական փոփոխությունների ընդունման կարգին:

ՀՀ Սահմանադրական դատարանի նոր կարևորագույն լիազորություններից է սահմանադրական լիազորությունների կապակցությամբ սահմանադրական մարմինների միջև ծագած վեճերի լուծման լիազորությունը: «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրինագծի համաձայն, նշված հարցերով Սահմանադրական դատարան կարող են դիմել պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդը՝ վերջիններիս և Ազգային Ժողովի սահմանադրական լիազորությունների կապակցությամբ ծագած վեճերով, Հանրապետության Նախագահը, Կառավարությունը, Բարձրագույն դատական խորհուրդը և տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց սահմանադրական լիազորությունների կապակցությամբ ծագած վեճերով: Գտնում են, որ նշված հարցերը կարող են քննարկվել Սահմանադրական դատարանի կողմից միայն այն դեպքում, երբ պատասխանողի գործողությունը կամ անգործությունը խոչընդոտում է դիմողին Սահմանադրությամբ տրված լիազորությունների իրականացմանը կամ դրանց իրականացման համար ուղիղ սպառնալիք են ներկայացնում: Բացի այդ, ներկայացված վեճի լուծումը չպետք է մտնի այլ մարմինների իրավազորության մեջ կամ չպետք է ենթակա լինի Սահմանադրության 168 հոդվածով նախատեսված Սահմանադրական դատարանի այլ լիազորությունների իրականացման շրջանակում լուծվելուն: Նշված հարցերով կայացրած որոշման մեջ Սահմանադրական դատարանը՝ մեկնաբանելով Սահմանադրության համապատասխան նորմերը, մատնացույց է անում այն սահմանադրական մարմինը, որը իրավասու է իրականացնելու համապատասխան լիազորությանը, որը իրավասու է իրականացնելու համապատասխան լիազորությամբ:

յունները և ճանաչում է համապատասխան գործողության կամ անգործության իրականացումը Սահմանադրությանը հակասող:

Ինչպես նշվեց, այսուհետ պատգամավորի լիազորությունների դադարեցման վերաբերյալ որոշումն ընդունելու է Սահմանադրական դատարանը: Այս հարցով Սահմանադրական դատարան կարող են դիմել Ազգային ժողովի խորհուրդը, ինչպես նաև պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդը:

ՀՀ Սահմանադրական դատարանի նոր լիազորություն է նաև ՍԴ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշման ընդունումը: Այս հարցով ՍԴ կարող են դիմել Սահմանադրական դատարանի առնվազն երեք դատավոր: Գտնում են, որ այն դատավորը, որի լիազորությունների դադարեցման հարցը քննարկվում է, կարող է գործընթացին մասնակցել բացառապես պատասխանողի կարգավիճակով: «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրինագծի համաձայն, նշված գործի դիտարկման արդյունքում Սահմանադրական դատարանը կարող է կիրառել կարգապահական պատժի հետևյալ տեսակներից մեկը՝ նախազգուշացում, նկատողություն վեց ամիս ժամանակով աշխատավարձի 30 տոկոսի չափով կրճատմամբ, խիստ նկատողություն մեկ տարի ժամանակով աշխատավարձի 30 տոկոսի չափով կրճատմամբ: Ավելին՝ ՍԴ դատավորին կարգապահական պատասխանատվության կանչելու հիմք կարող է հանդիսանալ Սահմանադրական դատարանի դատավորի վարքի կանոնների խախտումը: Նշենք, որ սահմանադրական արդարադատության օրենսդրության բարեփոխման շրջանակներում նախատեսվում է նաև Սահմանադրական դատարանի դատավորի վարքի կանոնների ընդունումը:

Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունների դադարեցման, ինչպես նաև Սահմանադրական դատարանի դատավորի նկատմամբ քրեական գործի հարուցման համար համաձայնություն տալու հարցը կամ իր լիազորությունները կատարե-

լու կապակցությամբ նրա ազատագրկման հարցը այսուհետ որոշելու է Սահմանադրական դատարանը: Հարկ է նշել, որ ի տարբերություն նախորդ կարգավորումների, որոնց համաձայն նշված հարցերի կապակցությամբ Սահմանադրական դատարանը միայն եզրակացություն էր տալիս, իսկ վերջնական որոշումն ընդունում էին համապատասխան մարմինները, այսուհետ տվյալ հարցերի վերջնական լուծման լիազորությունը պատկանում է հենց Սահմանադրական դատարանին: Գտնում են, որ նշված հարցերով նույնպես այն դատավորը, որի համապատասխան հարցը քննարկվում է, կարող է գործընթացին մասնակցել բացառապես պատասխանողի կարգավիճակով:

2015թ. սահմանադրական բարեփոխումների արդյունքում նախատեսված կարևորագույն նորամուծություններից է Հանրապետության Նախագահի, որը ըստ Սահմանադրության հետևում է վերջինիս պահպանմանը, դիմումի հիման վրա օրենքների կանխարգելիչ սահմանադրական վերահսկողության ինստիտուտի ներմուծումը: Համաձայն Սահմանադրության 129 հոդվածի, Հանրապետության Նախագահը քսան մեկ օրվա ընթացքում ստորագրում և հրապարակում է Ազգային Ժողովի ընդունած օրենքը կամ նույն ժամկետում դիմում է Սահմանադրական դատարան՝ օրենքի Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու հարցով: Եթե Սահմանադրական դատարանը որոշում է, որ օրենքը համապատասխանում է Սահմանադրությանը, Հանրապետության Նախագահը հինգօրյա ժամկետում ստորագրում և հրապարակում է օրենքը: Եթե Հանրապետության Նախագահը չի կատարում սույն հոդվածով նախատեսված պահանջները, Ազգային Ժողովի Նախագահը հինգօրյա ժամկետում ստորագրում և հրապարակում է օրենքը:

Վերոհիշյալը վկայում է այն մասին, որ սահմանադրական բարեփոխումների արդյունքում Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական արդարադատության ինստիտուտը ենթարկվել

է ընդարձակ փոփոխությունների, որոնք, մեր կարծիքով, կդառնան իրավունքի գերակայության սկզբունքի կիրառման, մարդու հիմնական իրավունքների և ազատությունների երաշխավորման սահմանադրական մեխանիզմների կատարելագործման կարևորագույն նախադրյալները:

Հաջորդ հարցը, որը մեր կարծիքով պիտի հաշվի առնվի սահմանադրական արդարադատության ինստիտուտի բարեփոխման ընթացքում և դատական պրակտիկայում կայանում է ներքոհիշյալում:

Վիճարկվող նորմը Սահմանադրական դատարանի որոշման մեջ արտահայտված իրավական դիրքերի շրջանակներում Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու պրակտիկան տարածված է բազմաթիվ պետությունների սահմանադրական դատարանների գործունեությունում¹: Յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները, սակայն նշված դատարանների համար ընդհանուրն այն է, որ որոշման մեջ ներկայացված մեկնաբանությունը պարտադիր է դառնում բոլոր մյուս պետական մարմինների համար²:

¹ Օրինակ՝ Գերմանիայի, Լիտվայի, ՌԴ-ի, Սլովենիայի, Իսպանիայի, Հունգարիայի, Բոսնիա և Հերցեգովինայի, Հայաստանի և այլն:

² Այս առումով անհրաժեշտ է նշել տվյալ հիմնախնդրին վերաբերող հանուն ժողովրդավարության՝ իրավունքի միջոցով Եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողովի) դիրքորոշումը, համաձայն որի «Սահմանադրական և սովորական դատարանների միջև հարաբերությունների հստակության կարևոր գործոնն է որոշակի օրենսդրական, կամ ավելի շուտ սահմանադրական դրույթը, որը պարտադրում է մյուս բոլոր պետական մարմիններին, այդ թվում նաև դատարաններին, պահպանել Սահմանադրական դատարանի տված մեկնաբանությունը, ինչը կարող է հիմք հանդիսանալ դատարանում սեփական իրավունքների պաշտպանությունը պահանջելու համար»: (տես. CDL-AD(2010)039rev, Study on Individual Access to Constitutional Justice, Adopted by the Venice

Միաժամանակ, չնայած վերոհիշյալին, Սահմանադրական դատարանի և դատական այլ ատյանների փոխհարաբերությունների ոլորտում գոյություն ունեցող կարևոր հիմնախնդիրներից է մնում ընդհանուր դիրքորոշման բացակայությունն այն մասին, թե դատական որ մարմիններն ունեն սահմանադրական արդարադատության օբյեկտ հանդիսացող օրենքների մեկնաբանության լիազորություն, ինչպես նաև նշված ոլորտում իրավազորության սահմանազատման հարցի մասին: Առաջին հայացքից կարող է թվալ, թե քննարկվող հիմնահարցի լուծումը միանշանակ է, այն է՝ օրենքների մեկնաբանությունը տալիս են միայն ընդհանուր դատարանները, իսկ սահմանադրության մեկնաբանությունը՝ Սահմանադրական դատարանը: Սակայն տեսական առումով անվիճելի թվացող այս որոշումը բարդ կիրառելի է դառնում պրակտիկայում՝ նկատի ունենալով նախ սահմանադրական դատարանի իրավական կարգավիճակի, նպատակների և խնդիրների առանձնահատկությունները:

Այն, որ Սահմանադրական դատարանը սահմանափակված չէ այլ դատարանների տված օրենքների մեկնաբանությամբ կայացած փաստ է պետությունների մեծամասնության դատաիրավական պրակտիկայում:¹ Հայաստանի Հանրապետությունում այդ մասին վկայում են նաև գործող օրենսդրական կարգավորումները: Մասնավորապես՝ «Սահմանադրական դատարանի մասին»² օ-

Commission at its 85th Plenary Session (Venice, 17-18 December 2010), § 165, <http://www.venice.coe.int/docs/2010/CDL-AD%282010%29039rev-e.pdf>).

¹ Տես, Եվրոպական սահմանադրական դատարանների կոնֆերանսի 12-րդ Կոնգրեսի զեկույցները: <http://www.confueconstco.org/reports/>.

² <<Սահմանադրական դատարանի մասին>> 2006թ. հունիսի 1-ի ՀՕ-58-Ն ՀՀ օրենք // ՀՀ Պաշտոնական տեղեկագիր, N 32(487), 21 հունիսի 2006թ., Հոդ. 645:

րենքի 68 հոդվածի 8-րդ մասին համաձայն Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների տեսակներից է **վիճարկելի ակտի կամ դրա վիճարկելի դրույթի Սահմանադրական դատարանի որոշմամբ բացահայտված սահմանադրահրավական բովանդակությամբ Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին որոշումը**։ Իսկ 69 հոդվածի 12-րդ մասի համաձայն, նշված հոդվածով նախատեսված գործերով ...-այն դեպքում, երբ **սահմանադրական դատարանը, որոշման եզրափակիչ մասում բացահայտելով օրենքի դրույթի սահմանադրահրավական բովանդակությունը, այն ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող և միաժամանակ գտել է, որ այդ դրույթը նրա նկատմամբ կիրառվել է այլ մեկնաբանությամբ**, դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով։ 2011 թվականի հոկտեմբերի 26-ին կատարված փոփոխությունների արդյունքում նմանատիպ դրույթները նախատեսվել էին նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության և քրեական դատավարության օրենսգրքերում, համաձայն որոնց դատական ակտերի՝ նոր հանգամանքներով վերանայելու հիմք են հանդիսանում դեպքերը, երբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանը տվյալ քաղաքացիական կամ քրեական գործով դատարանի կողմից կիրառված օրենքի դրույթը ճանաչել է անվավեր և հակասող սահմանադրությանը, կամ **որոշման եզրափակիչ մասում բացահայտելով օրենքի դրույթի սահմանադրահրավական բովանդակությունը, ճանաչել է այն համապատասխան Սահմանադրությանը, և միաժամանակ փաստել, որ այն իր նկատմամբ կիրառվել է այլ մեկնաբանությամբ**¹։ Վերը նշվածը վկայում է այն

¹ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.33 1-ին կետ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4 1-ին մասի 1-ին կետ։

մասին, որ Սահմանադրական դատարանն իր լիազորությունների կատարման ընթացքում կարող է բացահայտել օրենքի վիճարկվող դրույթի սահմանադրաիրավական բովանդակությունը: Ընդ որում, եթե որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով Վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանումը) Հայաստանի Հանրապետության Դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներ ունեցող գործի քննության ժամանակ (մեր շեշտադրումը՝ Ա. Մ.), նույնը չի կարելի ասել Սահմանադրական դատարանի մասին, քանի որ ըստ գործի էության ընդունված Սահմանադրական դատարանի որոշումները, հետևաբար նաև դրանցում բացահայտված օրենքի դրույթի սահմանադրաիրավական բովանդակությունը պարտադիր են **բոլոր պետական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնակատար անձանց, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց** համար Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում: Ընդհանրացնելով վերը նշվածը, նշենք, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանն իր լիազորությունների կատարման ընթացքում կարող է բացահայտել օրենքի վիճարկվող դրույթի սահմանադրաիրավական բովանդակությունը, ընդ որում, նշված իրավական դիրքորոշումն ունի պարտադիր բնույթ:

Հետևաբար, այս դեպքում հիմնական խնդիրն է՝ ինչպես սահմանազատել վերոնշյալ դատարանների իրավազորությունը քննարկվող ոլորտում և ինչ միջոցներ կիրառել այդ նպատակին հասնելու համար: Այս իմաստով անհրաժեշտ է նշել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 171-րդ հոդվածը, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն դատական ատյան է հանդիսանում Վճռաբեկ դատարանը, բացա-

ռությամբ սահմանադրական արդարադատության ոլորտի, **որն ապահովում է օրենքների և նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառումը** (մեր շեշտադրումը՝ Ա. Մ.), իսկ 167-րդ հոդվածին համապատասխան, սահմանադրական արդարադատությունն իրականացնում է Սահմանադրական դատարանը՝ ապահովելով Սահմանադրության գերակայությունը: Սա վկայում է այն մասին, որ Սահմանադրությունը պարզել է նշված դատական մարմիններից յուրաքանչյուրի առաքելությունը, տրամադրելով Վճռաբեկ դատարանին (որպես արդարադատություն իրականացնող մարմնի) օրենքի միատեսակ կիրառումն ապահովելու լիազորությունը, իսկ Սահմանադրական դատարանին՝ սահմանադրական արդարադատություն իրականացնելու լիազորությունը:

Հետևաբար գտնում ենք, որ գործող սահմանադրական կարգավորումների պայմաններում ներկայացված խնդրի լուծումը պետք է լինի այսպիսին. յուրաքանչյուր դատական մարմին օրենքի մեկնաբանության գործառույթը պետք է իրականացնի իր իրավազորությանը հանձնված ոլորտների սահմաններում, բացառապես իր առաքելության իրականացումն ապահովելու նպատակով: Այլ կերպ ասած, ելակետային չափանիշը, որով պայմանավորված են նշված դատական ատյանների կողմից օրենքների մեկնաբանության ոլորտային սահմանները, նրանց գործունեության հիմքում ընկած նպատակն է: Այսինքն, մի դեպքում մեկնաբանելով օրենքի դրույթը, Վճռաբեկ դատարանը նպատակ է հետապնդում ապահովել օրենքի միատեսակ կիրառումը, մեկ այլ դեպքում Սահմանադրական դատարանն իրականացնում է այդ գործառույթը սահմանադրական արդարադատության իրականացման նպատակով: Այս հանգամանքը պետք է ընկած լինի նշված դատական ատյանների **ինքնասահմանափակման** գործունեության հիմքում¹. Այս

¹ Այս իմաստով անհրաժեշտ է նշել Հունգարիայում քննարկվող խնդրի կարգավորման առնչությամբ ներկայացված տեսանկյունը՝

տեսանկյունից անդրադառնալով Սահմանադրական դատարանի կողմից օրենքների մեկնաբանման խնդրին, եզրակացնում ենք, որ վերջինս կարող է իրականացնել տվյալ գործառույթը օրենքի կամ դրա համապատասխան դրույթների **սահմանադրահրավական բովանդակության** բացահայտման, այլ ոչ թե օրենքի ընդհանուր մեկնաբանման նպատակով¹.

Այս համատեքստում անհրաժեշտ է ուշադրության առնել ևս մեկ հանգամանք. չնայած, որ Վճռաբեկ դատարանի խնդիրներից մեկն է օրենքի միատեսակ կիրառման ապահովումը, ներկայացված սահմանադրական կարգավորումների շրջանակներում խոս-

համաձայն որի նշված եկու մեկնաբանությունները կատարում են սկզբունքորեն տարբեր գործառույթներ: Այսպես կոչված “սահմանադրական պահանջները” սահմանվում են իրավական նորմերի վերահսկման շրջանակներում, այն դեպքում, երբ օրենքների միատեսակ կիրառման նպատակով ընդունվող որոշումները ուղղված են հակասական դատական պրակտիկայի վերացմանը: (տես. The relations between the Constitutional Courts and the other national courts, including the interference in this area of the action of the European courts // Report of the Constitutional Court of Republic of Hungary prepared for the XIIth Congress of the Conference of European Constitutional Courts, <http://www.confcoconsteu.org/reports/General%20report-EN.pdf>).

¹ Հատկանշական է, որ վերը նշվածը ընդունված և հաճախ կիրառվող պրակտիկա է Գերմանիայի Դաշնային Սահմանադրական դատարանում, որը բացահայտում է օրենսդրության բովանդակություն բացառապես Սահմանադրության տեսանկյունից: Ընդ որում տվյալ մեկնաբանությունը պարտադիր է այլ մարմինների համար և ունի օրենքի ուժ (տես՝ Rainer A. The decisions of the German Federal Constitutional Court and their binding force for ordinary courts, [www.constcourt.gov.az/en/download/.../9.../10.Rainer_Arnold_\(eng\).doc](http://www.constcourt.gov.az/en/download/.../9.../10.Rainer_Arnold_(eng).doc)): Նույնը կարելի է ասել Ռուսաստանի Դաշնության Սահմանադրական դատարանի և շատ այլ պետություններում սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմինների մասին:

քը կամայական փաստաթղթի մասին չէ՝ “օրենք” անունը կրող, այլ՝ **սահմանադրական օրենքի**: Իսկ օրենքը, որը կարելի է մեկնաբանել մի քանի տարբերակով, սահմանադրական կարող է համարվել միայն այն դեպքում, երբ ընկալվում է համապատասխան սահմանադրական պահանջների համատեքստում: Սա իր հերթին ենթադրում է, որ վերը նշված դեպքերում կիրառման ենթակա է Սահմանադրությանը համապատասխան ճանաչված օրենքի մեկնաբանությունը, մասնավորապես, այս դեպքում Սահմանադրական դատարանի մեկնաբանությունը, քանի որ հատկապես սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմնի խնդիրը այն իրավական սահմանների մատնանշումն է, որոնց շրջանակներում պետք է ընկալվի և կիրառվի տվյալ իրավական նորմը, և որոնց շրջանակներից դուրս կիրառվող կամ մեկնաբանվող նորմը կհանգեցնի հակասահմանադրական հետևանքների: Հետևաբար, Սահմանադրական դատարանի՝ օրենքների մեկնաբանման իրավազորությունը սահմանափակվում է վերը նշված շրջանակներով և չի կարող իրականացվել այդ սահմաններից դուրս¹.

¹ Տվյալ դեպքում կարելի է մեջբերել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորներից մեկի խոսքերը. “Սահմանադրական դատարանի կարևորագույն գործառույթներից մեկն է սահմանադրական գաղափարների մեկնաբանությունը, ինչի շնորհիվ Սահմանադրական դատարանը ներկայացնում է ոչ միայն սահմանադրական տեքստի տեսանկյունից նշանակություն ունեցող չափանիշներ, այլ նաև օրենքի սահմանադրական մեկնաբանության տեսանկյունից” (տես՝ (Guerra L. Latent and Manifest Functions of Constitutional Courts // Ալմանախ (Նոր հազարամյակի Սահմանադրական արդարադատությունը). Երևան, 2011, Ը. 54)): (տես. The relations between the Constitutional Courts and the other national courts, including the interference in this area of the action of the European courts // Report of the Constitutional Court of the Republic

Միաժամանակ պետք է ուշադրության առնել այն, որ վերը նշվածը վերաբերում է այնպիսի մեկնաբանությունների առկայության դեպքերին, երբ դրանցից որևիցե մեկը հակասում է սահմանադրական պահանջներին: Սակայն այն դեպքում, երբ դատարանները կիրառում են Սահմանադրությանը համապատասխան նորմի մեկնաբանությունը, ոչ արդյունավետ իրավազորությունների սահմանազատման տեսանկյունից, որպեսզի Սահմանադրական դատարանը մեկնաբանի այն այլ կերպ:

Հաշվի առնելով վերը նշվածը, գտնում ենք, որ այն դեպքերում, երբ այլ դատական ատյանների կողմից օրենքի նորմի մեկնաբանությունը համապատասխանում է Սահմանադրությանը, նպատակահարմար է, որպեսզի Սահմանադրական դատարանը այլ կերպով կիրառի տվյալ մեկնաբանությունը և բացահայտի վերջինիս սահմանադրաիրավական բովանդակությունը միայն այն դեպքերում, երբ առկա է հակասություն նորմի ընդունված ընկալման և սահմանադրական պահանջների միջև¹.

of Slovenia prepared for the XIIth Congress of the Conference of European Constitutional Courts, <http://www.confcoconsteu.org/reports/Slovenia-EN.pdf>).

¹ Այս իմաստով անհրաժեշտ ենք համարում ներկայացնել Սլովենիայի Հանրապետությունում ընդունված պրակտիկան, որտեղ Սահմանադրությունը մեկնաբանվում է Սահմանադրական դատարանի կողմից, իսկ օրենքները՝ ընդհանուր դատարանների, բացառությամբ Սահմանադրությունը խախտելու դեպքերի: Սահմանադրական դատարանը կարող է մեկնաբանել օրենքները այն դեպքերում, երբ հնարավոր են դրանց երկու տարբեր մեկնաբանություններ, որոնցից մեկը հակասում է Սահմանադրությանը, իսկ մյուսը, որը ներկայանում է Սահմանադրական դատարանի այսպես կոչված “մեկնաբանող որոշմամբ”, համապատասխանում է վերջինիս: Տվյալ մեկնաբանությունն անկասկած դառնում է պարտադիր դատարանների համար: Բայց եթե հնարավոր են օրենքի դրույթների մի քանի մեկնաբանություններ, որոնցից ոչ մեկը չի հանդի-

Հետևաբար, քննարկվող խնդրի առնչությամբ հիմնական չափանիշները, որոնք մեր կարծիքով հնարավորություն կտան ապահովելու իրավագործությունների արդյունավետ սահմանազատումը տարբեր դատական ատյանների միջև, ընդհանրացված կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

- ելակետային չափանիշը, որով պայմանավորված են օրենքի մեկնաբանության ոլորտային սահմանները Սահմանադրական դատարանի և այլ դատական ատյանների կողմից, իրենց գործունեության նպատակն է: Այս հանգամանք պետք է ընկած լինի քննարկվող մարմինների **ինքնասահմանափակման** գործունեության հիմքում,

- Վճռաբեկ դատարանի խնդիրն է՝ **սահմանադրական օրենքի**, այլ ոչ թե կամայական փաստաթղթի՝ “օրենք” անունը կրող, **միատեսակ կիրառման** ապահովումը, որը ենթադրում է սահմանադրական պահանջներին համապատասխան օրենքի մեկնաբանում,

- Սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմնի խնդիրն է՝ մատնանշել, օրենքի որ մեկնաբանությունն է համապատասխանում Սահմանադրությանը, իսկ որը՝ ոչ, այլ կերպ ասած՝ մատնանշել այն իրավական սահմանները, որոնց շրջանակներում պետք է ընկալվի և կիրառվի տվյալ իրավական նորմը, և որոնց շրջանակներից դուրս կիրառվող կամ մեկնաբանվող նորմը կհանգեցնի հակասահմանադրական հետևանքների,

սանում հակասահմանադրական, ընդհանուր դատարաններն իրենք են որոշում, ինչպես կիրառել նշված նորմը (տես՝ The relations between the Constitutional Courts and the other national courts, including the interference in this area of the action of the European courts // Report of the Constitutional Court of the Republic of Slovenia prepared for the XIIth Congress of the Conference of European Constitutional Courts, <http://www.confcoconsteu.org/reports/Slovenia-EN.pdf>):

- Սահմանադրական դատարանը կարող է իրականացնել այս գործառնությունը օրենքի կամ դրա համապատասխան դրույթների սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման, այլ ոչ թե օրենքի ընդհանուր մեկնաբանության նպատակով,

- եթե հնարավոր է օրենքի նորմի մի քանի մեկնաբանում, և դատարանների մեկնաբանությունը համապատասխանում է Սահմանադրությանը, իրավագործությունների սահմանազատման տեսանկյունից նպատակահարմար է, որպեսզի Սահմանադրական դատարանը կիրառի տվյալ մեկնաբանությունը,

- եթե հնարավոր է օրենքի նորմի մի քանի մեկնաբանում, և առկա է հակասություն նորմի ընդունված ընկալման և սահմանադրական պահանջների միջև, նպատակահարմար է, որպեսզի սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմինը՝ բացահայտելով վերջինիս սահմանադրաիրավական բովանդակությունը, ներկայացնի Սահմանադրությանը համապատասխան մեկնաբանությունը,

ուշադրության առնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությունում կատարված փոփոխությունները Սահմանադրական դատարանի ընդունած որոշումների տեսակների և դատական ակտերի՝ նոր հանգամանքներով վերանայման հիմքերի առնչությամբ, և հաշվի առնելով իրավական կանխատեսելիության սկզբունքի ապահովման անհրաժեշտությունը, գտնում ենք, որ նպատակահարմար է ձևավորել Սահմանադրական դատարանի կողմից որոշումների ընդունման միատեսակ պրակտիկա նորմի տարբեր մեկնաբանությունների հնարավորության դեպքում, կիրառելով “օրենքի՝ Սահմանադրությանը համապատասխան մեկնաբանության սկզբունքը”, և ճանաչելով օրենքի նորմի հակասությունը Սահմանադրությանը միայն այն դեպքերում, երբ այն

հնարավոր չէ մեկնաբանել սահմանադրական պահանջների համատեքստում¹.

¹ Վերը նշվածը վկայում է այն մասին, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի մասին օրենքի 63 հոդվածի 1 մասով նախատեսված կարգավորումը, համաձայն որի Սահմանադրական դատարանը՝ որոշելով իրավական ակտի սահմանադրականությունը, գնահատում է ինչպես հենց ակտը, այնպես էլ ստեղծված իրավակիրառական պրակտիկան, ենթադրում է ոչ թե վիճարկվող ակտի՝ Սահմանադրությանը ամբողջությամբ կամ մասնակի հակասող և անվավեր ճանաչման մասին որոշման ընդունման հնարավորությունը այն դեպքերում, երբ ակտը կիրառվել է Սահմանադրությանը չհամապատասխանող մեկնաբանությամբ, բայց կարող է մեկնաբանվել սահմանադրական պահանջների համատեքստում, այլ ուղղակի հնարավորություն է ընձեռնում մեկնաբանության սահմանադրականությունը գնահատելու նպատակով հաշվի առնել իրավական ակտի կիրառման պրակտիկան: Մինչույն ժամանակ անհրաժեշտ է ուշադրության առնել այն, որ կան երկրներ, ինչպես օրինակ՝ Հունգարիան, Իտալիան, որոնք կիրառում են այսպես կոչված “կենդանի իրավունքի” տեսությունը, երբ նորմը ճանաչվում է հակասահմանադրական վերջինիս մշտապես հակասահմանադրական մեկնաբանության արդյունքում, նույնիսկ եթե հնարավոր է դրա սահմանադրական մեկնաբանությունը (տես՝ The Relations between the Constitutional Courts and the Other National Courts, including the Interference in this Area of the Action of the European courts // Report of the Constitutional Court of Republic of Hungary prepared for the XIIth Congress of the Conference of European Constitutional Courts, <http://www.confcoconsteu.org/reports/General%20report-EN.pdf>, CDL-JU (99) 26, Effects, Enforceability and the Execution of the Decisions of the Constitutional Court – the Hungarian Experience // Report by Mr Peter Paczolay (Secretary General of the Constitutional Court), Budapest, <http://www.venice.coe.int/docs/1999/CDL-JU%281999%29026-e.asp>, CDL-AD(2010)039rev, նշ. փաստաթուղթ):